

**ԳԵՂԵՑԻԿ ԱՊՐԵԼՈՒ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**

ԳԵՂԵՑԻԿ ԱՊՐԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

(Խորհմաստ պատումներ)

2013

**ԳԵՂԵՑԻԿ ԱՊՐԵԼՈՒ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**
(Խորհմասպ պատումներ)



© , 2013

Առաջաբան

*«Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է,
որ բարի հասնար է բոլոր նրանց համար,
ովքեր առաջնորդվում են նրանով»:
Առակ Ա 7*

Մարդու համար բնական է երջանկություն որոնելը եւ դրան ձգտելը: Սակայն շատ հաճախ չիմանալով նրա տեղը՝ մենք ընկնում ենք անվերջ փնտրտուքի մեջ եւ մեր աստվածապարգեւ կյանքը դարձնում անիմաստ եւ ապարդյուն վագր: Մենք երբեմն մեծ սպասումով նայում ենք դեպի հեռուն՝ կարծելով, թե երջանկությունը մեզնից դուրս պիտի գտնենք: Թվում է, թե աշխարհիկ վայելքներն անանց երջանկություն կպարգեւեն մեզ, եւ դրանց հասնելու համար սկսում ենք անել ամեն ինչ. ձգտում ենք հարստության ու իշխանության, որպեսզի ապահովենք վայելքների մշտական լինելը: Սակայն իշխանության հասնելուն պես ձեռք ենք բերում բազում թշնամիներ, վրա են հասնում վտանգներ եւ սուտ բարեկամների որոգայթներ: Ոմանք հիասթափվելով թողնում են այս ամենն իբրեւ

մի անտանելի բեռ եւ երջանկությունը մի ուրիշ բանի մեջ փնտրում: Ոմանք էլ շարունակում են իշխանության մրցավազքը՝ վերջնականապես ճգմվելով բեռի ծանրության տակ:

Սակայն իրականում երջանկությունը մեր հոգիներում եւ սրտերում է անթեղված: Իսկ մուրանքի եւ անգիտության խավար քողը խանգարում է մեզ նշմարելու այն: Երջանկության կրակը բորբոքելու համար պետք է միայն առաքիտության եւ իմաստության միջոցով հեռացել մեղքի ու տգիտության մոխիրը մեր սրտերից: Աստվածային իմաստությունը հղված է բոլորին. լսում են շատերը, ընդունում՝ ոմանք:

Սիրելի՛ ընթերցող, հույս ունենք, որ առաքիտությամբ զարդարվելու, իմաստությունը լսելու, սովորելու եւ ընդունելու ճանապարհին իր փոքրիկ ծառայությունը կմատուցի քեզ այս գրքուկը, որտեղ ամփոփված են միջնադարյան եւ արդի աղբյուրներից բաղված, օտար լեզուներից թարգմանված, ավելի պարզ եւ հասկանալի դարձնելու նպատակով վերաշարադրված կամ մասնակի փոփոխությունների ենթարկված, խմբագրված առակներ ու բարոյախրատական պատումներ: Ահա այս հույսով ենք ջանացել եւ այժմ ձեր՝ ընթերցողներիդ դատին ենք հանձնում այս փոքրիկ առականիս:

Երկու խոսք

Առակների այս հավաքածուն, որ կազմել են Սուրբ Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանի սաները, ուշագրավ եւ պահանջարկ ունեցող աշխատանք է: Ընդհանրապես, առակներն ունեն դաստիարակչական մեծ նշանակություն եւ հաճախ դառնում են ընթերցողի խորհրդատուն կյանքի զանազան իրավիճակներում: Տարբեր աղբյուրներից քաղված, որոշակիորեն մշակված եւ հավաքածուում ի մի բերված առակները վերաբերում են մարդու եւ՛ բանականությանը, եւ՛ հոգեւոր աշխարհին: Ամենասովորական ու առարկայական դիպվածների միջոցով արծարծվում են բարձրագույն արժեքներին վերաբերող խնդիրներ, քարոզվում են բարություն, արդարամտություն, իմաստնություն, հավատք՝ խաղաղություն բերելով ընթերցողի հոգուն եւ դրական լիցքեր հաղորդելով մտքին:

Հավաքածուի առակներն ընտրված են ճաշակով, շարադրված են գեղեցիկ հայերենով եւ ընթերցվում են հետաքրքրությամբ:

**Չրաշալի է, որ այս գործը նախաձեռնել եւ
անհրաժեշտ մակարդակով կատարել են երի-
տասարդները:**

Վիկտոր Կատվայան

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Տ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի տնօրեն

ԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի փոքրիկ տղա տասը արծաթ ուներ: Երբ փողը կորցնում է, սկսում է լաց լինել: Մի բարի մարդ, տեսնելով, որ փոքրիկը լալիս է, խղճում է նրան եւ տասը արծաթ տալիս, որ նա ուրախանա: Փոքրիկը ուրախանալու փոխարեն սկսում է աղիողորմ լալ: Մարդը զարմանքով հարցնում է, թե էլ ինչո՞ւ է լալիս: Տղան ասում է, որ եթե իր տասը արծաթը չկորցնեք, այժմ քսան արծաթ կունենար:

Եթե մարդիկ ավելին ունենալու տենչ ունեն, չեն կարող հանգիստ ապրել եւ միշտ դժգոհ կմնան: Ազահությունը մարդու մեջ ավելի է սաստկանում, երբ նրա ունեցած ոսկիները շատանում են:

ԱՆՄԱՍ ՈՐՈՆՈՂԸ

Գյուղացին իր հողակտորը վարելիս մի փայլուն քար գտավ: Քարը գրավիչ տեսք ուներ. գյուղացին մտածեց, որ դա հետաքրքիր խաղալիք կլինի երեխաների համար, եւ քարն առավ բերեց տուն:

Երեխաները որոշ ժամանակ խաղացին, հետո ձանձրացան, ինչպես հատուկ է նրանց, ու քարը գցեցին լուսամուտի գոգին, որտեղ այն մոռացության մատնվեց:

Մի թափառական այդ կողմերով անցնելիս հյուրընկալվեց գյուղացու տանը: Ընթրիքից հետո սկսեցին զրուցել դեսից-դենից. թափառականը շատ նորություններ գիտեր աշխարհի տարբեր կողմերից: Զրույցի վերջում խոսքը դարձավ գյուղացու ապրուստին, եւ թափառականը, կարծես իմիջիայլոց, ասաց.

- Ես մի տեղ գիտեմ, որտեղ հենց ուղղակի գետի ափին ավաստ է թափված: Առանց մեծ ջանք գործադրելու՝ դու կարող ես հեքիաթային հարստության տիրանալ: Իսկ քո հողակտորի վրա աշխատելով՝ ամբողջ կյանքում այսպես աղքատ էլ կմնաս:

Առավոտյան թափառականը գնաց, իսկ ավաստը գտնելու եւ հարստանալու տենչը համակեց գյուղացուն: Ի վերջո, նա վաճառեց իր փոքրիկ վարելահողը ու ճամփա ընկավ՝ ավաստ որոնելու՝ կնոջն ու երեխաներին խոստանալով հինգ տարի անց վերադառնալ հարստացած:

Շատ թափառեց, շատ որոնեց ու չարչարվեց, բայց այդպես էլ չգտավ այն գետը, որի

ափերն ալմաստով էին ծածկված: Սակայն այդ հինգ տարիների ընթացքում նա լավ ճանաչեց ու իմացավ, թե ինչ է ալմաստը: Եվ երբ տուն վերադարձավ, աչքերին չհավատաց. աներեւակայելի մեծության մի հազվագյուտ ալմաստ ընկած էր իր տան լուսամուտի գոգին: Եվ գյուղացին մտաբերեց, թե ինչպես էր գտել այն:

ԱՂՈԹՔԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄ

Մի ֆրանսուհի աղջիկ արագորեն իջնում է ավտոբուսից եւ շտապում դեպի Սուրբ Աստվածամոր տաճարը ու աղոթում.

- Տե՛ր իմ Աստված, գոհություն եմ հայտնում քեզ եւ ուրախություն ապրում, որ այսօր կարողացա ավտոբուսի տոմս գնել մի աղքատ պապիկի համար: Նայում եմ շուրջս ու տեսնում, թե ինչքան ունեւոր մարդիկ կան, բայց չեն օգնում խեղճ ու չքավոր մարդկանց: Երանի հնարավորություն ընծեռեիր ինձ ունենալ կարողություն եւ հարստություն՝ ստեղծելու համար մի հիմնադրամ եւ առատաձեռնորեն օգնելու աղքատներին ու տնանկներին: Երա-

ևի թե կարողանայի բարեգործությամբ զբաղվել՝ անունդ փառավորելով ամբողջ աշխարհում:

Տիրոջ հրեշտակը գալիս է եւ ասում.

- Հիսուս լսեց աղոթքդ, եւ մեկ ժամ անց կունենաս այդ մեծ հարստությունը եւ կարողությունը՝ մարդկանց օգնելու համար:

Աղջիկը փոքր-ինչ զարմանում է, որ այդքան արագ ինքը հարստանալու է՝ բարեգործություն անելու համար, սակայն մտածելով, որ Աստծո համար անհնար ոչինչ չկա, մեծ ուրախությամբ հեռանում է:

Անցնում է մեկ ժամ, բայց որեւէ բան չի փոխվում, անցնում է երկու ժամ, երեք, չորս, եւ այդպես՝ մեկ օր, սակայն աղջիկը ո՛չ հարստություն է տեսնում, ո՛չ էլ կարողություն: Եվ հաջորդ օրը, կրկին փութալով, գնում է եկեղեցի, աղոթում ու նեղսրտում, թե ինչո՞ւ ինքը չհարստացավ՝ Աստծո անունը փառավորելու համար:

Տիրոջ հրեշտակը գալիս է, ձեռքով իր աջ կողմում մի տեսիլային պատկեր ցույց տալիս ու ասում.

- Մի՛ վհապվիր եւ տխրիր, ահա տեսնում ես՝ այս պատկերում երեւում է, թե Աֆրիկայում ինչքան սովահար ու տանջահար տնանկ-

ներ ու չքավորներ կան՝ երեխաներ, մայրեր, ծերեր, երիտասարդներ: Եվ Աստված քեզ տվեց այդ մեծ հարստությունը, սակայն տեսնելով քո սրտի մեծությունը եւ բարեգործությունը՝ ժամանակ չկորցնելու համար այդ մեծ կարողությունը միանգամից Աֆրիկա ուղարկեց, որտեղ այժմ շատ մարդիկ դրա համար փառավորում են Տիրոջ անունը եւ գոհություն հայտնում: Արդ, այն, ինչ ունես այժմ, բավարար է քեզ համար, շարունակիր ավտոբուսով երթնելու եւ Աստծո անունը փառավորել: Եթե նպատակդ Տիրոջ անունը փառավորելն է եւ ոչ թե բարեգործությամբ քո անձը երեւելի դարձնելը, ապա ուրախ եղիր եւ գոհությո՛ւն հայտնիր, քանի որ Աստված լսեց աղոթքդ եւ իրագործեց այն:

Անակնկալի եկած աղջիկը պատասխանում է.

- Բայց ես..., ես ուզում էի, որ ես...

Ապա լռեցայն շարժվում է դեպի ավտոբուս:

ԱՂՈԹԻՐ ՀԱՎԱՏՈՎ

Մի կիրակի, երբ եկեղեցում մատուցվում էր Սուրբ Պատարագ, հավաքվել էր հավատավորների մեծ բազմություն: Բոլորն աղո-

թում էին, եւ ահա եկավ մի պահ, երբ բոլորը պետք է ծնկի իջնեին աղոթքի համար: Բոլորը ծնկի իջան, բացի մի մարդուց: Մարդիկ տեսան նրա այդ վարմունքը եւ Պատարագից հետո այդ մասին ասացին վանահորը: Նրանք պնդում էին, որ այդ մարդն անհավատ է: Վանահայրը նրան կանչեց իր մոտ եւ հարցրեց, թե ինչո՞ւ նա չի ծնրադրել Աստծո առաջ: Մարդը, խոր հոգոց հանելով, ասաց, որ ինքն այնքան ինքնամոռաց է աղոթել, որ մոռացել է իր մարմնի մասին: Միեւնույն ժամանակ նա ասաց, որ այն մարդիկ, որոնք եկել եւ ամենն ասել էին վանահորը, թեպետ ծնրադրել էին, սակայն չեն աղոթել, քանի որ դրա փոխարեն իրեն են հետեւել:

ԱՂՈԹՔ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պապ ու թոռ մահանում են, եւ նրանց հոգիները բարձրանում են երկինք: Այնտեղ հրեշտակը ամեն օր ջրով լի մի կուժ է բերում, եւ նրանք խմում են: Այդպես շարունակվում է մի քանի օր: Այնուհետեւ կժի ջուրը գնալով նվազում է, եւ մի օր էլ հրեշտակն այլեւս ջուր չի բերում: Թոռը հարցնում է պապին.

- Ինչո՞ւ հրեշտակը մեզ ջուր չի բերում:

Պապը պատասխանում է.

- Այդ ջուրը մեր հարազատների եւ բարեկամների աղոթքն էր: Երբ մենք նոր էինք մահացել, նրանք ամեն օր մեզ համար աղոթում էին: Իսկ հետո գնալով քչացրին մեզ համար արվող աղոթքը եւ ի վերջո ամբողջովին դադարեցին աղոթել մեզ համար:

ԱՂՔԱՏ ՈՐՂԻՆ

Մի հարուստ մարդ պանդուխտ որդի ուներ, որն ապրում էր աղքատության մեջ եւ իր ապրուստը սեփական քրտինքով էր վաստակում: Երկար տարիներ հայրը փնտրել էր նրան ամենուր, սակայն ապարդյուն: Մի անգամ, շատ անսպասելի, նա դեմ առ դեմ հանդիպում է որդուն, սակայն որդին հորը չի ճանաչում եւ նրա շքեղ հագուստի տեսքից վախեցած՝ դիմում է փախուստի: Հայրը նրան բերել է տալիս իր տուն ու աղքատ կարգավիճակին վայել գործ հանձնարարում: Եվ միայն նրա կարգավիճակն աստիճանաբար բարձրացնելուց հետո, երբ որդին արդեն գրեթե հասել էր հորը, հայրը բացում է գաղտնիքը եւ նրան կարգում իրեն ժառանգ:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կուսակրոն ու առաքիկաւոր մի քահանա աղոթելիս հափշտակութեան մեջ ընկնելով, մի տեսիլք տեսավ: Ըստ տեսիլքի՝ նա գտնվում էր մի լայնատարած ու հորդահոս գետի մոտ: Այդ գետի միջով անցնում էին բազմաթիվ մարդիկ: Մարդկանցից ոմանք իրենց ուսերին բեռներ ունեին: Այդ մարդիկ գետի մեջ խեղդվում էին, քանզի բեռան ծանրութեան պատճառով չէին կարողանում շարժվել առաջ: Նրանք ամենքն էլ իրենց գանազան բեռների պատճառով էին խեղդվում՝ առանց մեկի միջամտութեան: Քահանան, այդ վտանգը տեսնելով, խիստ ցավում է նրանց համար: Բայց կային նաեւ մարդիկ, ովքեր առանց բեռների էին, եւ որոնց վրա միայն սուրբ աղքատութիւնն էր երեւում. նրանք, գետը մտնելով, անվնաս ու անվտանգ անցնում էին: Աղոթքի ավարտից հետո քահանան գնում է վանահոր մոտ եւ խնդրում մեկնել իր տեսիլքը: Վանահայրն ասում է.

- Այդ մարդիկ, որոնք խեղդվում էին գետի մեջ, այն մեղսագործ հարուստներն էին, որոնց հարստութիւնը, իրենց բեռ դարձած, արգելեց անցնել գետը եւ մտնել Երկնքի

Արքայություն: Իսկ այն մարդիկ, որոնք անց-
նում էին գետը, աղքատ հավատացյալներն
էին, որոնք չունեին իրենց խանգարող ոչ մի
բան, որ արգելք լիներ նրանց՝ Երկնքի Արքա-
յություն մուտք գործելու համար:

«ԱՄԵՆԱԿԱՐՈՂ» ԱԹԵԻՍՏԸ

Մի աթեիստ գիտնական մահանում է: Նրա
հոգին բարձրանում է երկինք, եւ հրեշտակնե-
րը նրան հարցնում են, թե ինչո՞ւ իր ամբողջ
կյանքում չի հավատացել Աստծո զորությա-
նը: Աթեիստը պատասխանում է եւ ասում, որ
Աստված իրենից այնքան էլ զորեղ չէ, քանզի
ինքն էլ է կարողանում ստեղծել այն, ինչ որ
ստեղծել է Աստված: Եվ այդ դեպքում էլ ինչո՞ւ
պիտի հավատա Նրա զորությանը: Հանկարծ
լսվում է Աստծո ձայնը.

- Դե որ այդպես է, եկ մա՛րդ ստեղծենք:

Մարդը համաձայնում է: Տիրոջ հետ շտապ
գործի անցնելով՝ կռանում է եւ գետնից մի
բուռ հող վերցնում: Այդ պահին Աստված
նրան կանգնեցնում է եւ ասում.

- Այդ հողը ես եմ ստեղծել: Դու օգտագոր-
ծիր քո ստեղծածը:

Գիտնականը մնում է գլխիկոր:

ԱՆՋՈՐ ԱՂՎԵՍԸ

Մի օր բարեպաշտ մի մարդ անտառում տեսավ մի աղվես, որը ոտքեր չուներ:

Մարդը ցանկացավ իմանալ, թե ինչպես էր աղվեսը այդքան ժամանակ կենդանի մնացել: Եվ սպասելով որոշ ժամանակ՝ նա տեսավ մի վագրի, որը ատամներով բռնել էր որսը: Մի քիչ ուտելուց հետո՝ վագրը մնացածը տվեց աղվեսին: Հաջորդ օրը նույն տեղը գալով՝ մարդը տեսավ նույնը:

Վերադառնալով անտառից՝ մարդը խորհում էր Աստծու ողորմածության մասին: Եվ հանկարծ նա ինքն իրեն մտածեց. «Ես նույնպես կպառկեմ մի անկյունում եւ հույսս կդնեմ Աստծու վրա»:

Մի ամբողջ շաբաթ մարդը պառկեց անկյունում եւ ահագին հյուժվել էր, երբ հանկարծ լսեց մի ձայն, որն ասում էր.

- Ո՛վ դու, զարտուղի՛ ճանապարհով քայլող, բա՛ց աչքերդ եւ հասկացի՛ր ճշմարտությունը: Օրինակ վերցրու ո՛չ թե աղվեսից, այլ վագրից:

ԱՆՀԱՎԱՏ ՄԱՐԴԸ

Մի անհավատ մարդ էր ապրում՝ Էությամբ բարի ու մարդասեր: Սակայն այս բարի մարդը չէր կարողանում հավատալ, որ Հիսուս Քրիստոսի անձի մեջ Աստված մարդացավ:

Սուրբ Ծննդյան նախօրյակին՝ մի փոթորկալից երեկո, նա որոշում է տանը մնալ, իսկ ընտանիքի բոլոր անդամները գնում են եկեղեցի՝ մասնակցելու Սուրբ Ծննդյան ճրագալույցին: Հանկարծ պատուհանից տեսնում է, որ թռչունների մի խումբ ընկել է ձյունամրրիկի մեջ եւ կարծես հուսահատորեն ապաստան է խնդրում:

Մարդը անմիջապես դուրս է վազում եւ բացում փարախի դռները, բայց թռչունները ներս չեն մտնում: Հացի փշրանքներ է ցանում ձյան վրա, սակայն թռչունները չեն փորձում նույնիսկ հետեւել դրանց: Ապա փորձում է նրանց բաց դռնից ներս հրավիրել՝ իր ձեռքերը շարժելով ու ձայներ արձակելով, բայց կրկին անօգուտ:

Նա հուսահատված ինքն իրեն ասում է. «Երեւում է՝ նրանք չեն հասկանում, թե ես ինչ եմ ուզում ասել»: Ու մտածում է. «Եթե միայն

ես կարողանայի թռչուն դառնալ նրանց պես, թերեւս նրանք իմ հետեւից գային դեպի լուսը»։ Եվ այդ պահին լսում է եկեղեցու զանգերի ղողանջը։

Մի պահ նա ուշադիր լսում է ու անկախ իր կամքից, ձյան վրա ծնկի իջնելով, աչքերը դեպի երկինք բարձրացրած՝ շշնջում է.

- Հիմա եմ հասկանում, թե ինչու Դու այդպես արեցիր։ Աստված մարդացավ։

ԱՆՀԱՎԱՏ ՏՂԱՆ

Մի անգամ տղան դպրոցից գալիս է եւ հայտարարում.

- Հայրի՛կ, Աստված գոյություն չունի։

- Ո՞վ քեզ ասաց,- հարցնում է հայրը։

- Ուսուցչուհին (տղայի համար ուսուցչուհին ամենաբարձր հեղինակություն ունեցող մարդն էր)։

Հայրը ոչինչ չի ասում, բայց հաջորդ օրը առավոտյան ավելի շուտ է արթնանում եւ տան մոտ՝ ճանապարհի վրա, նկարում տարբեր պատկերներ։ Երեխան արթնանում է եւ տեսնելով այդ ուրվագծերը՝ բացականջում.

- Օ՛, հայրի՛կ, նայի՛ր ինչ-որ մեկն այստեղ նկարել է։

- Ի՞նչ ես ասում,- ասում է հայրը,- ինքնիրեն
է պատկերվել:

- Ինչպե՞ս, հևարավոր չէ:

- Ինչպե՞ս թե հևարավոր չէ, ինքնիրեն է
նկարվել: Եթե այս գեղեցիկ ծաղիկն ինք-
նիրեն է առաջացել, եթե մարդն ինքնիրեն է
առաջացել, եթե այս ամենը նույնպես ինքն-
իրեն է առաջացել, ապա այս հասարակ գծերը
նույնպես կարող էին իրենք իրենց առաջա-
նալ:

- Ո՛հ, հայրի՛կ:

Այս իմաստուն դասից հետո տղան սկսում
է խորհել, թե ինչպե՞ս կարող է առանց Արար-
չի ստեղծվել որեւէ բան, ու հասկանում է հոր
պատգամը:

ԱՆՀԱՎԱՏԸ

Մի աթեիստ, ընկնելով ժայռից, կառչեց
ճյուղից եւ որոշ ժամանակ մնում էր այդպես
անդունդի վրա կախված: Հանկարծ նրա
գլխով մի միտք անցավ.

- Տե՛ր, Աստված,- ճչաց նա:

Լռություն, ոչ մի պատասխան:

- Տե՛ր Աստված,- նորից գոռաց նա,- եթե
Դու կաս երկնքում, փրկի՛ր ինձ, խոստանում

եմ, որ ես կհավատամ Քեզ, կփորձեմ այսուհետ առաքինի ապրել եւ ուրիշներին էլ դարձի կբերեմ:

Նորից լռություն: Երբ նա զգաց, որ ճյուղը ուր որ է կպոկվի, վերեւից մի ահարկու ձայն լսվեց.

- Բոլորն էլ այդպես են ասում, երբ ընկնում են նեղության մեջ:

- Ո՛չ, Տեր,- սկսեց խոսել խեղճ աթեիսող,- ես բոլորի նման չեմ: Ես արդեն սկսեցի հավատալ Քեզ, մի՞թե չես տեսնում, որ ես նույնիսկ լսում եմ Քո ձայնը: Միայն թե փրկիր ինձ, եւ ես կփորձեմ Քեզ ծառայել մինչեւ օրերիս վախճանը:

- Շատ լավ,- ասաց ձայնը,- ես քեզ կփրկեմ, իսկ հիմա բա՛ց թող ճյուղը:

- Բաց թողնե՛մ,- ճչաց վախից սարսափած մարդը,- մտածում ես, թե ես լիովին խելքս թոցրել եմ:

ԱՆՀԵԹԵԹ ՆԱՆԱՏՈՒՄ

Հայր ու որդի իրենց իշուկով միջօրեի շոգին անցնում էին քաղաքի փոշոտ փողոցներով: Հայրը նստել էր էշին, իսկ որդին, սանձից բռնած, գնում էր կողքից:

- Խեղճ տղա,- ասաց անցորդներից մեկը,-
նրա փոքրիկ ոտքերը հազիվ են հասնում էշի
հետևից: Դու ինչպե՞ս կարող ես ծույլ-ծույլ
սատել էշի վրա, երբ տեսնում ես, որ տղադ ու-
ժասպառ է եղել:

Հայրը ազդվեց այդ խոսքերից: Ամփջա-
պես իջավ էշից, իր որդուն սատեցրեց, եւ ինքը
սկսեց քայլել: Քիչ անց մի մարդ բարձրաձայն
ասաց.

- Ի՛նչ անամոթություն, փոքրիկ չարածնին
թագավորի պես սատել է էշին, իսկ նրա խեղճ
հայրը վազում է հետևից:

Տղան շատ վշտացավ, փոքր-ինչ առաջ
եկավ ու խնդրեց հորը սատել իր հետ միա-
սին: Քիչ ճանապարհ էին անցել, երբ մի կին
նրանց ետևից գոռաց.

- Ի՛նչ անխղճություն, անասունի մեջքը
ծռվել է ծանրությունից, բա մեղք չե՞ր կենդա-
նին:

Նրանք գայրացած իջան էշից եւ սկսեցին
նոքով գնալ: Դեռ տասը քայլ չէին գցել, երբ
մեկը բարցրածայն ծիծաղեց.

- Հապա մի սրանց կայեք, էշին զբոսանքի
են հանել, էլ ինչո՞ւ եք պահում սրան, եթե ձեզ
չի ծառայելու:

Հայրը հասկացավ, որ պետք է անել այն-

պես, ինչպես իրենց է հարմար, եւ ուշադրութ-
յուն չդարձնել մարդկանց ասեկոսներին:

ԱՆՏԵՂ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի անգամ համայնքի քահանային է մոտե-
նում ամուսնացած մի զույգ.

- Տե՛ր հայր, - ասում է կինը, - գիտե՞ք՝ մենք
երեխա ենք ունենալու:

- Օ՛, - ուրախանում է քահանան, - Աստված
թող օրհնի ձեզ, զավակներ ՚րս, ի՛նչ լավ լուր
ասացիք...

- Գիտե՞ք, մենք արդեն չորս երեխա ու-
նենք,- խոսքը կտրում է ամուսինը,- եթե հիև-
գերորդն էլ ծնվի... ապրելը ծայրահեղորեն
կդժվարանա:

- Ե՞վ,- մոռալվում է քահանան,- ի՛նչ ելք եք
տեսնում:

- Տե՛ր հայր, տվեք ձեր օրհնությունը,
խնդրում ենք, որպեսզի արիեստականորեն
ընդհատենք հղիությունը...

Քահանան մտահոգվում է.

- Լավ, հասկանում եմ, որ յոթ հոգանոց ըն-
տանիք պահելը շատ դժվար է. տալիս եմ իմ
օրհնությունը, որպեսզի սպանեք ձեր երե-
խային, միայն թե... ավելի լավ է սպանեք ձեր

ավագ դատերը, այլապես անարդար է. փոքրիկը դեռ արեւի լույս էլ չի տեսել, իսկ ավագ դուստրը արդեն տասը տարեկան է, կյանքից ինչ-որ բան համտեսել է, նրան սպանեք...

Ամուսինները գլուխները կախ դուրս են գալիս եկեղեցուց...

ԱՆՕԳՈՒՏ ԸՆԿԵՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մի անգամ մեծ ջրհեղեղ եղավ, եւ կապիկն ու ձուկը հայտնվեցին ջրերի հորձանուտում: Կապիկը՝ այդ ճարպիկ ու փորձառու արարածը, հաջողեցրեց մագլցել ծառը եւ խույս տալ փոթորկվող ջրերից: Իր անվտանգ տեղից ներքեւ նայելով՝ տեսավ, թե դժբախտ ձուկն ինչպիսի հուսահատությամբ է պայքարում սրընթաց հեղեղի դեմ: Կապիկը ամենաբարի մտադրությամբ կռացավ ներքեւ եւ ձկանը դուրս հանեց ջրից:

Արդյունքը տխուր էր:

ԱՍՊԵՏԸ

Ասում են, թե խաչակրաց արշավանքից իր հայրենի գերմանական գյուղը վերադառնալիս մի մռայլադեմ ասպետ ծնկի է գալիս

իրենց գյուղի լճակի մոտ, նայում պարզկա ու կապուտակ լճակի մեջ արտացոլվող իր դիմագծերին ու ասում.

- Ո՞վ է այս մռայլ մարդը, որ լճակի միջից նայում է ինձ: Տե՛ր Աստված, հոգիս խաղաղ չէ: Հասա իմ նպատակին, տեսա Սուրբ քաղաքը, հաղթեցի թշնամուն եւ վերադարձա, սակայն կարծես ինքս ինձ չեմ գտնում ու չեմ հասկա-
նում, թե ինչու եմ այսքան տկարանում...

Արագորեն շրջվում է եւ տեսնում, որ երկու ասպետներ սրամարտի են բռնվել: Նրանցից մեկը սայթաքում եւ ընկնում է, գլխից թռչում է սաղավարտը, եւ մռայլադեմ ասպետը ապշա-
հար տեսնում է, որ ընկած մարդը ինքն է...: Պատյանից հանում է սուրը եւ դեմ հանդիման կանգնում մյուս ասպետի առջեւ՝ ընկածին պաշտպանելու համար: Իր դիմաց կանգնած գորականը դանդաղորեն հանում է սաղավար-
տը, եւ մռայլադեմ ասպետը զարմանքից քա-
րանում է, քանի որ կրկին իրեն է տեսնում...:

Նրան մոտենում է մի վանական ու ասում.

- Ի՞նչու ես սուրդ հանել այս ամայի դաշտում ու միայնակ մարտի սպասում: Չե՛ս տես-
նում, որ հոգիդ ու մարմինդ միմյանց դեմ են մարտնչում, թշնամաբար ես նայում նրանց, հաշտվիր ե՛ւ՛ հոգուդ, ե՛ւ՛ մարմնիդ հետ, շնոր-

հակալ եղիր նրանցից ու քո ջերմագին սերը հաղորդիր նրանց՝ ներողություն խնդրելով նրանց տառապանք ու ցավ պատճառելու համար: Դու պետք է ոչ թե մարմնիդ ու հոգուդ դեմ պայքարես, այլ մեղքի դեմ:

Երբ մարդ կորցնում է իր ներքին խաղաղությունը, հիվանդանում է..., իսկ աստվածային սերը անգին դեղ է, որը բժշկում է մարդուն...

ԱՍՏՈՒ ԳՈՐԾԵՐՆ ԱՆՔՆՆԵԼԻ ԵՆ

Մի մարդ ընկուզենու ծառի տակ ձմերուկ է ցանում: Պտղի ժամանակ տեսնում է մեծ ձմերուկներն ու մանր ընկույզները եւ ասում.

- Տե՛ր Աստված, բոլոր ստեղծածներդ կարգին են, միայն այս երկու պտուղները կարգին չեն. ընկույզի տեղը ձմերուկ պիտի լիներ:

Նա պառկում է ծառի տակ հանգստանալու, եւ ծառից մի ընկույզ է ընկնում, այդ մարդու ճակատը պատռում: Մարդն աղաղակելով ասում է.

- Տե՛ր Աստված, քո ստեղծած ամեն բան կարգին է: Ով չհավանի՝ նրա ճակատը իմից վատ լինի, որովհետեւ եթե ընկույզի փոխարեն ձմերուկ լիներ, ինձ կսպաներ:

ԱՍԾՈՒՆ ՓՆՏՐԵԼՈՒ ՃԱՆԱԳԱՐՆ

Մի մարդ մոտենում է մի ճգնավորի եւ ասում.

- Ես ուզում եմ գտնել Աստծու ճանապարհը, օգնի՛ր ինձ:

Ճգնավորը ուշադիր նայում է նրան եւ հարցնում.

- Նախ ասա՛ ինձ՝ արդյոք սիրե՞լ ես մեկին:
Մարդը պատասխանում է.

- Ես չեմ հետաքրքրվում աշխարհիկ կյանքով, սիրով ու մնացած բաներով: Ես ուզում եմ գնալ առ Աստված:

- Մի անգամ էլ մտածիր. սիրե՞լ ես արդյոք քո կյանքում մի կնոջ, երեխայի կամ որեւէ մեկի,- ասում է ճգնավորը:

- Ես սովորական մարդ չեմ: Ես մարդ եմ, որը ցանկանում է ճանաչել մարդուն, ինձ դա չի հետաքրքրում, ես ոչ մեկին չեմ սիրել,- պատասխանում է մարդը:

Ճգնավորը խորունկ տխրությամբ պատասխանում է.

- Այդ դեպքում անհնար է. սկզբում դու պետք է ճանաչես, թե այդ ի՞նչ է՝ իրապես, իսկապես սիրել որեւէ մեկին, դա է Աստծուն սիրելու սկիզբը, գնա՛ եւ սիրի՛ր որեւէ մեկին:

ԱՍՏՎԱԾ ՄԵՋ ՀԵՏ Է

Մի մարդ երազում տեսավ, որ ծովափին երկու ոտնահետքեր են հայտնվել: Որպեսզի իմանա, թե այդ երազը ինչ է նշանակում, նա գնաց իմաստունի մոտ և պատմեց իր տեսածը: Իմաստունը պատասխանեց.

- Այդ ոտնահետքերից մեկը քոնս է, իսկ մյուսը՝ Աստծունը: Արդ, ուրախ եղիր, քանզի Աստված քեզ հետ է:

Որոշ ժամանակ անց երազը կրկնվեց, սակայն այս անգամ երազում նա տեսավ մեկ ոտնահետք: Մարդը մտածեց, որ Աստված իրեն լքել է, և շատ տխրեց: Նա դարձյալ գնաց իմաստունի մոտ և ասաց, որ Աստված իրեն լքել է, քանզի այլևս իր հետ չի քայլում, և ծովափին միայն մեկ մարդու ոտնահետք է երեւում:

Այդ ժամանակ իմաստունը պատասխանեց.

- Ծովափին երեւացող այդ ոտնահետքը ոչ թե քոնս է, այլ Աստծունը: Արդ, ուրախացի՛ր, քանզի Աստված քեզ գրկած է տանում:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՐՉԱՆԻԿԸ

Մի թագավորի նվիրել էին ոսկյա միատեսակ երեք արձանիկներ, դրանց հետ էլ՝ մի գրություն, որի մեջ ասվում էր, որ արձանիկներից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունն ու արժեքը: Թագավորի իմաստունները այդ արձանիկների մեջ չկարողացան գտնել ո՛չ արտաքին եւ ո՛չ էլ ներքին տարբերություններ: Միայն մի իմաստուն կռահեց գաղտնիքը: Նա ոսկյա բարակ լարը հերթով մտցրեց արձանիկների ականջները: Առաջին արձանիկի դեպքում լարի ծայրը դուրս եկավ մյուս ականջից, երկրորդի դեպքում՝ բերանից, իսկ երրորդի դեպքում՝ սրտից:

Առաջինը խորհրդանշում է այն մարդուն, որի մի ականջից խոսքը մտնում է, մյուսից՝ դուրս թռչում: Երկրորդը հիշեցնում է այն մարդուն, որը, հագիվ լսելով ասվածը, շտապում է պատմել ուրիշներին՝ նույնիսկ չխորհելով դրա մասին: Իսկ երրորդ արձանիկը նման է նրան, ով լսում ու հիշում է ասվածը եւ աշխատում այն անցկացնել սեփական սրտի միջով: Այդ արձանիկը երեքից ամենաարժեքավորն է:

ԲԱՐԻՔ ԳՈՐԾԻՐ ԱՄԵՆ ԴԵՊՔՈՒՄ

Մի ծեր անապատականի մոտ մի երիտասարդ վանական եկավ:

- Ա՛բբա,- ասաց նա,- երբ ես բարիք եմ գործում, խիղճս ինձ ասում է, որ ես լավ եմ անում, եւ դա ինձ ամաչեցնում է: Ես վախենում եմ, որ միգուցե հպարտության ոգի առաջանա իմ մեջ:

- Որդի՛ս,- պատասխանեց անապատականը,- երկու մշակներ կային, որոնք ցանքի համար միայն անորակ ցորեն ունեին՝ խառնված տարբեր տեսակի աղբի եւ մոլախոտերի սերմերի հետ: Մշակներից մեկը ընդհանրապես հրաժարվեց ցանել՝ չցանկանալով իր ուժերը վատնել վատ բերքի համար, որն անխուսափելիորեն պետք է ստացվեր այդպիսի սերմեր ցանելուց հետո: Իսկ մյուսը ցանեց եւ հավաքեց մի քիչ ցորեն՝ թեկուզ եւ վատորակ ու աղբախառն: Սովի տարի եղավ. երկրորդ մշակը ամեն դեպքում կերակրվեց, թեկուզեւ դժվարությամբ, իսկ առաջինը հայտնվեց անելանելի իրադրության մեջ: Նրանցից ո՞ր մեկն ավելի լավ վարվեց:

- Իմ կարծիքով՝ այն մեկը, ով ցանեց,- ասաց երիտասարդ վանականը:

- Այդպես էլ մենք,- ասաց անապատակա-
նը,- պետք է ցանենք բարի գործեր, թեկուզ
եւ նրանց խառնված լինեն վատ մտադրու-
թյուններ:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Փողոցով մի գեղեցիկ աղջիկ էր քայլում:
Նկատելով, որ իրեն մի մարդ է հետեւում՝
շրջվում է ու հարցնում.

- Ինչո՞ւ ես հետեւում ինձ:

- Օ՛, իմ սրտի՛ տիրուհի, քո հմայքն այն-
քան անդիմադրելի է, որ չեմ կարող չգալ քո
հետեւից: Ես սիրում եմ քեզ,- արտասանում է
մարդը:

- Իմ կրտսեր քույրը, որն իմ ետեւից է գա-
լիս, ավելի գեղեցիկ է, քան ես,- ասում է աղջի-
կը:

Մարդը անմիջապես հետ է նայում, մի պա-
ռավ է տեսնում իր հետեւում ու ասում է.

- Ինչո՞ւ ստեցիր, իմ հետեւում մի պառավ է,
որը քո քույրը չէ:

Աղջիկը պատասխանում է.

- Բարեկամս, դու ստեցիր, երբ ինձ սիրո
խոստովանություն էիր անում: Եթե ինձ սի-
րում ես, ինչպե՞ս կարողացար շրջվել՝ մեկ ու-
րիշ կնոջ նայելու:

ԳԻՏԵԼԻՔԻ ՈՒԺԸ

Մի շենում չորս խոհրդավոր ընկերներ՝ իմաստունի աշակերտներ էին ապրում: Նրանցից երեքը բավականին իրագեկ էին բոլոր գիտություններին, բայց զուրկ էին ողջամտությունից: Չորրորդը քիչ իմացություն ուներ, բայց փոխարենը շոայլորեն օժտված էր ողջամտությամբ: Մի օր, երբ բոլորը հավաքված էին, ընկերներից մեկն ասում է.

- Ի՞նչ օգուտ մեր գիտելիքներից, եթե դրանք չենք օգտագործում: Եկեք գևանք ուրիշ երկիր, այնտեղի տիրակալին առաջարկենք մեր գիտելիքները եւ հարստություն ձեռք բերենք:

Նրանցից մեկն առաջարկում է չորրորդ ընկերոջը չտանել, քանի որ նա տգետ է: Բայց մյուսն առարկում է՝ ասելով, թե չի կարելի չտանել, մանկուց միշտ միասին են եղել եւ երբեք իրարից չեն բաժանվել: Բոլորը համաձայնում են վերջինիս հետ, եւ չորսով ճամփա են ընկնում:

Անտառով անցնելիս ընկերները առյուծի ոսկորներ են տեսնում:

- Ահա եւ մեր գիտելիքները ցուցադրելու հարմար առիթ,- ասում է սրանցից մեկը,- եկեք առյուծին վերակենդանացնենք:

Ողջամիտը փորձում է առարկել.

- Եթե կենդանացնես առյուծին, ևս բոլորիս կհոշոտի:

- Ռժքել եմ քո հիմար դատողությունների վրա: Հիմա կտեսնես, թե ինչ ուժ ունես իմ գիտելիքները:

- Այդ դեպքում սպասիր, մինչեւ ես ծառը կբարձրանամ,- խնդրում է ողջամիտը:

Գիտելիքների ուժը ցուցադրել ցանկացող ընկերը հազիվ էր հասցրել ավարտել հրաշագործությունը, երբ վերակենդանացված առյուծը հարձակվում է երեք գիտունների վրա եւ պատահոտում սրանց:

ԳՅՈՒՂԱՅԻՆ

Գյուղացին պարկով լի ցորենը իջեցնում է ուսից, դնում իր անջրդի, անմշակ, մոլախոտերով ծածկված վարելահողի եզրին եւ ասում.

- Գևամ լեռան ստորոտում գտնվող մատուռը, մի զորավոր աղոթք ասեմ, Աստված ինձ

մի գութան ու երկու լծկան եզներ ուղարկի, այս իմ արտը վարեմ, ցորենը ցանեմ:

Երբ աղոթքը վերջացնում է, գոհացած իր հավատքից եւ աղոթքից՝ դուրս է գալիս մատուռից, բայց տեսածից անակնկալի գալով՝ գոռգոռալով վազում է դեպի իր հողատարածքը, ուր մի հրեշտակ պարկի ցորենը ձեռքով վերցնում, ցանում էր անմշակ, մուլախոտով պատված վարելահողի մեջ:

Գյուղացին բացականչում է.

- Տե՛ր Աստված, այս ի՞նչ ես անում. այս հրեշտակը ցորենս վատնեց ու անմշակ հողի վրա լցրեց:

Հրեշտակը դադարեցնում է իր գործը եւ պատասխանում.

- Խնդրանքներ ես ուղղում Աստծուն, սակայն չես նկատում, թե ինչպես այս դաշտն է խոտածածկ, այնպես էլ հոգիդ է փշերով պատված: Նախ սիրտդ ու հոգիդ ամբողջովին մաքրիր, մշակիր, այնուհետեւ սպասելիքներիդ հետամուտ եղիր: Ինքդ ես ասում, թե ցորենդ վատնեցի եւ մուլախոտերի մեջ ցանք կատարեցի, առավել եւս Աստված իր պարգեւները չի վատնում անմշակ ու անջրդի հոգիներում:

ԳՈՀԱՆԱԼ ՏՎԱԾՈՎ

Աղքատ մարդը երազում սպիտակամորուք մի ծերունու է տեսնում: Ծերունին ասում է, թե Աստուծուց է ուղարկված, եւ ի պատասխան ջերմեռանդ աղոթքների՝ ինը ոսկի է տալիս աղքատին:

- Ինչու՞ ինը, ես տասն էի խնդրում. քանի որ տալիս ես, թող տասը լինի, կլոր տասը:

Ծերունին պատասխանում է.

- Այսքան է որոշված, վերցրո՛ւ եւ գոհացի՛ր:

Մարդը համառում է, խոսակցությունը վեճի է վերածվում: Վեճի ընթացքում մարդը արթնանում է եւ տեսնում, որ ո՛չ ծերունին կա, ո՛չ էլ ոսկին:

Մարդը զղջում է եւ աչքերը փակելով՝ ասում.

- Շատ լավ, թող ինը լինի, միայն թե լինի:

ԴԻՄԱՑԻՑ ԵԿՈՂ ՊԱՏԱՍԽԱՆ

Մի մարդ իր փոքրիկ որդուն տանում է լեռները: Երեխան, նայելով խոր անդունդներին, իրեն մեծ է զգում ու սկսում է գոռալ.

- Ես մեծ եմ:

Արձագանքը պատասխանում է նույնը:
Տղան բարկանում է.

- Ո՛հ, դու փոքր ես, ես եմ մեծ:

Արձագանքը՝ նույնը: Տղան հորն ասում է.

- Այստեղ չար մարդիկ կան, ինձ նեղացնում
են:

Հայրը պատասխանում է.

- Տղա՛ս, այստեղ աշխարհն է, ապա փոր-
ծիր լավ բան ասել:

Տղան ասում է.

- Այո՛, դու ես մեծը:

Արձագանքը՝ նույնը: Տղան ուրախանում է.

- Ես քեզ սիրում եմ:

Արձագանքն էլ՝ նույնը: Հայրն ասում է.

- Հիմա հասկացա՞ր, որ հայելուն ինչ դեմ-
քով կայես, նրա միջից էլ նույն դեմքով քեզ
կնայեն:

«Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ
ծեզ անեն, այդպես եւ դուք արեք նրանց»
(Մատթ. 7:12):

ԴՐԱՆՏ ԵՎ ԴԺՈՒՔ

Անապատով մի մարդ էր քայլում իր երկու
հավատարիմ ընկերների՝ ձիու եւ շան հետ:
Նրանք երկար ճանապարհ անցան, երբ հան-

կարծ տեսան մի դուռ եւ կողքին կանգնած պահակ:

Մարդը հարցրեց պահակին.

- Սա ի՞նչ դուռ է:

- Այստեղ դրախտն է, եթե ցանկանում ես, մտի՛ր,- պատասխանեց պահակը:

- Ես կարո՞ղ եմ իմ ընկերներին էլ վերցնել,- հարցրեց մարդը՝ ցույց տալով շանը եւ ձիուն:

- Ո՛չ, միայն քեզ է թույլատրված մտնել:

Մարդը մի պահ մտածեց. նա հիշեց, թե ինչպես են իրենք միասին երկար քայլել անտառներում ու ճահիճներում, լեռներում ու ձորերում՝ դիմադրելով շոգին ու ցրտին, տարբեր հիվանդությունների եւ անհաջողությունների:

- Ինձ թվում է, ես այստեղ չեմ մտնի, գնացի՛նք,- ասաց մարդը եւ քայլեց առաջ, իսկ ձին ու շունը հետեւեցին նրան: Բայց նրանք դեռ հարյուր մետր էին անցել, երբ նորից մի դուռ տեսան: Մարդը մոտեցավ դռան մոտ կանգնած պահակին եւ ասաց.

- Սա ի՞նչ դուռ է:

- Դռնից այն կողմ դրախտն է,- ասաց պահակը՝ բացելով դուռը:

- Ես կարո՞ղ եմ մտնել,- հարցրեց մարդը:

- Իհա՛րկե:

- Իսկ ընկերներ՞ս:

- Դե իհա՛րկե, այստեղ բոլորիդ համար էլ տեղ կգտնվի;

- Ջարմանալի է, ես հենց նոր մի այլ դուռ տեսա՝ դրախտ տանող, բայց միայն ինձ էին թողնում, որ անցնեմ...Չեմ հասկանում:

Դահակը ժպտաց եւ ասաց.

- Այդ դուռը դժոխքին էր: Դա նրանց համար է, որոնք լքում են իրենց ընկերներին:

ԴՐԱՆՏԻ ՀԱՐՈՒՍԸ

Հարուստ մեկը մահվանից հետո դրախտ է ընկնում: Այնտեղ շրջելիս նա տեսնում է, որ իր ծառան, որն ավելի վաղ էր վախճանվել, ապրում է գեղեցիկ ու շքեղ տան մեջ: Հարուստը մտածում է, որ եթե իր ծառան նման շքեղ տան մեջ է ապրում, ապա իրեն շատ ավելի ընդարձակ ու ճոխ տան բանալիներ են սպասում: Սակայն մեծ է լինում հիասթափությունը, երբ նրան բնակվելու համար մի խարխուլ խրճիթ են տալիս: Ուղեկցող հրեշտակը, ի պատասխան նրա զարմանքին ու հուսահատությանը, ասում է.

- Մի՛ զարմացիր, որ ծառադ շքեղ տան մեջ է բնակվում, իսկ դու՝ աղքատիկ խրճիթում: Յուրաքանչյուր բնակարան պատրաստվել է

այն շինանյութով, որը ինքներդ եք ուղարկել երկրից: Ձեր բարի գործերն են այդ շինանյութը:

ԴԵՎԵՐԻ ԺՈՂՈՎԸ

Մի անգամ սատանան դեւերին հավաքում է ժողով է գումարում իմանալու, թե ով ի՛նչ է կարողացել անել մարդկանց շեղելու համար: Դեւերից մեկն ասում է, թե այնպես է արել, որ մարդիկ հավատան, թե Աստված չկա: Սատանան ասում է.

- Թեեւ լավ գործ ես արել, սակայն կլինեն մարդիկ, որ Աստծու գոյությանը կհավատան:

Մյուս դեւը ասում է.

- Ես այնպես եմ արել, որ մարդիկ հավատան, որ սատանա չկա:

Սատանան պատասխանում է.

- Շատ լավ գործ ես արել, սակայն կլինեն մարդիկ, որ կհավատան, որ ես կամ:

Մյուս դեւը ասում է.

- Ես այնպես եմ արել, որ մարդիկ մի շաբաթ չաղոթեն կամ գոնե մի րոպե ուշ աղոթեն:

Սատանան ասում է, որ ամենամեծ գործը երրորդ դեւն է արել:

ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկու եղբայր միասին աշխատում էին ընտանեկան ֆերմայում: Եղբայրներից մեկն ամուսնացած էր եւ մեծ ընտանիք ուներ: Սյունս ամուսնացած չէր: Ամեն օրվա վերջում եղբայրները ստացած մթերքն ու եկամուտը հավասար կիսում էին: Բայց մի անգամ չամուսնացած եղբայրն ինքն իրեն ասաց. «Ամեն ինչ հավասար կիսելն անարդար բան է: Ես մենակ եմ, եւ իմ պահանջմունքներն էլ քիչ են»: Այդ պատճառով էլ նա ամեն գիշեր իր ամբարից մի պարկ ցորեն էր վերցնում եւ դաշտն անցնելով՝ գաղտնի տեղափոխում էր եղբոր ամբարը: Նույն բանն էր անում նաեւ ամուսնացած եղբայրը՝ մտածելով, որ իր եղբայրն ամուսնացած չէ, ուստի դեռ շատ անելիք ունի:

Տարիներ շարունակ եղբայրները նույնն էին անում: Նկատելով, որ իրենց ցորենը չի պակասում՝ նրանք զարմանում էին, մինչեւ որ մի գիշեր բախվեցին իրար ու ամեն ինչ հասկացան: Պարկերը մի կողմ դնելով՝ նրանք գրկախառնվեցին:

ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՐԺԱՆԻ

Երբ Արամը փոքր էր, տատիկը նրան միշտ ասում էր.

- Թռռնի՛կս, ահա կմեծանաս, եւ քո հոգին կալեկոծվի: Այդ ժամանակ կհիշես խորհուրդս, կգևաս եկեղեցի, եւ հոգիդ նորից կխաղաղվի:

Արամը մեծացավ, եւ ահա ապրելը դարձավ գրեթե անհնարին: Այդ ժամանակ նա հիշեց տատիկի խորհուրդը եւ գևաց եկեղեցի: Եվ այնտեղ նրան մեկը հանդիմանեց, թե ձեռքերը ճիշտ չի պահել, մյուսը թե՛ ճիշտ տեղում չի կանգնել, հաջորդը թե՛ ճիշտ չի հագնվել եւ ճիշտ չի խաչակնքում: Վերջապես մոտեցավ մի կին, քաշեց նրա հագուստից ու ասաց.

- Լա՛վ կլինի՛ դուրս գաս եւ մի գրքույկ գնես այն մասին, թե ինչպես քեզ պետք է պահես եկեղեցում:

Նա դուրս եկավ տաճարից, նստեց նստարանին եւ սկսեց հեկեկալ: Եվ հանկարծ մի ձայն լսվեց.

- Որոյա՛կ, ինչու՞ ես լալիս:

Արամը բարձրացրեց գլուխը եւ մի պայծառազգեստ մարդ տեսավ:

- Տե՛ր, ինձ չեն թողնում մտնել Քո Սուրբ տաճարը:

Մարդը գրկեց նրան եւ ասաց.

- Լաց մի՛ եղիր, նրանք ինձ էլ վաղուց չեն թողնում ներս մտնել:

ԵՍ ԱՂԶԿԱՆ ԹՈՂԵՑԻ ԳԵՏԻ ԱՅՆ ԱՓԻՆ

Երկու վանական ճանապարհ էին գնում: Հորդառատ անձրեւ էր տեղում: Երբ հասնում են գետին, մետաքսե զգեստով մի գեղեցիկ աղջիկ են տեսնում, որ մոլորված կանգնած էր եւ չէր կարողանում վարարած գետն անցնել:

- Ե՛կ անցկացնեմ,- ասում է վանականներից մեկը, գրկում է աղջկան ու անցնում գետի մյուս ափը:

Ամբողջ ճանապարհին երկրորդ վանականն այդ մասին ոչինչ չի խոսում: Երեկոյան հասնում են տաճար: Այստեղ արդեն նա չի դիմանում եւ ասում է.

- Մենք՝ վանականներս, չպետք է շփվենք կանանց հետ, հատկապես գեղեցիկ ու ջահել կանանց, ինչպիսին այն աղջիկն էր. դա վտանգավոր է: Ինչո՞ւ գրկեցիր նրան:

- ճիշտ է ես գրկեցի աղջկան, սակայն օգնելուց հետո թողեցի նրան գետի այն ափին, պատասխանում է առաջինը,- իսկ դու դեռ գրկած տանում ես:

ԵՐԵՆԱՆ

Մի քաղաքում երաշտ է լինում: Քաղաքի վանահայրը բոլոր բնակիչներին կանչում է աղոթքի, որ Աստված անձրեւ ուղարկի: Ամբողջ քաղաքը, որ հավաքվել էր աղոթելու առ Աստված, սկսում է ծիծաղել մի երեխայի վրա. նա եկել էր անձրեւանոցով: Մարդիկ ծիծաղում էին ու ասում.

- Այ գի՛ժ, ես չոր եղանակին անձրեւանո՞ցն ինչու ես բերել:

Երեխան պատասխանում է.

- Ես մտածեցի, թե ձեր աղոթքից հետո անձրեւ կգա:

ԵՐԵՔ ԱՍՈՒՅԹ

Պատմում են, որ Խոսրով թագավորի ժամանակներում մի մարդ քայլում էր փողոցով եւ բացականչում.

- Ո՞վ կգնի երեք ասույթ հազար դիևարով:

Իմանալով այդ մասին՝ թագավորը նրան հրավիրում է իր մոտ եւ ասում.

- Այդ ի՞նչ ասույթներ են:

Մարդը խնդրում է պատրաստել դիւարները, եւ երբ դրանք բերում են, ասում է.

- Ահա առաջին ասույթը. «Դու ոչ մի արժանավոր մարդ չունես»: Ահա երկրորդ ասույթը. «Թեեւ բոլոր մարդիկ այդպիսին են, դու նրանցից չես կարող ազատվել եւ առանց նրանց չես կարող գոյատեւել»: Եվ երրորդ ասույթը. «Թագավորը պետք է իմանա նրանցից յուրաքանչյուրի փչացածության աստիճանը, որ պեսզի տեսնի չարիքը եւ պաշտպանվի նրանից»:

Թագավորին դուր են գալիս այդ ասույթները, եւ նա կարգադրում է ոսկի տալ այդ մարդուն: Սակայն վերջինս հրաժարվում է վերցնել ոսկին: Թագավորն ասում է.

- Այդ դեպքում ինչո՞ւ էիր ոսկի խնդրում:

Մարդը պատասխանում է.

- Ես ցանկանում էի իմանալ՝ կճարվի՞ արդյոք մի մարդ, որը կցանկանա ոսկով իմաստություն գտնել:

ԵՐԿՆՔԻ ՏՈՒՆԸ

Մի բարեպաշատ եւ աղոթասեր կոշկակար կար, ում մասին մի ճգնավորի հայտնի դաձավ Աստծուց, որը նրա համար երկնքում տուն էր շինում: Բայց արհեստավորները շաբաթը միայն մեկ օր էին աշխատում: Իսկ ճգնավորը կոշկակարի վարքի մասին իմացավ, որ նա հանապազ վաստակում էր եւ, իր տան պետքերը հոգալուց հետո ինչ մնում էր, ամեն շաբաթ օր բաժանում էր աղքատներին: Այստեղից հայտնի է դառնում, որ առանց պատճառի չէր, որ տան շինվածքը ավելանում, եւ այն կառուցվում էր շաբաթը մեկ օր:

Արդ, եկեք բոլորս մեր տունը հաստատենք ոչ թե երկրի վրա, այլ երկնքում:

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ

Մի հարուստ մարդ ամեն ինչ ուներ՝ հարստություն, շքեղ ապարանք, գեղեցկուհի կին, ճոխ ու առատ սեղան: Բայց այդ ամենն այնպես էր հոգնեցրել նրան, որ իր հարստության մեջ նստած՝ անընդհատ գանգատվում էր ձանձրոյթից:

Նրա միակ ուրախությունը ուտելն էր: Արթնանում էր նախաճաշի սպասումով, հետո սպասում էր ճաշին, ճաշից հետո՝ ընթրիքին: Ամբողջ օրվա նրա կատարած աշխատանքը, միակ մտածմունքն ու հոգսը ուտելն էր: Այնքան շատ էր ուտում, որ շուտով ստամոքսը հիվանդացավ, եւ նա գրկվեց նաեւ իր միակ ուրախությունից, այլեւս ուտել չէր կարողանում: Հարուստն ստիպված է լինում բժիշկ կանչել: Բժիշկը զննում է նրան, դեղորայք տալիս ու հանձնարարում, որ օրական երկու ժամ զբոսնի բնության մեջ:

Եվ մի օր էլ զբոսնելիս, երբ տարված էր այն մտքով, թե երբ պիտի կարողանա նորից կուշտ ու կուռ ուտել, նրան է մոտենում մի մուրացիկ:

- Ի սեր Քրիստոսի, ողորմություն տուր խեղճ մարդուն:

Հարուստը, իր մտքերով տարված, չէր լսում մուրացկանին:

- Խնդրում եմ, պարո՛ն, ամբողջ օրը հաց չեմ կերել:

Ուտելու անուն լսելով՝ որկրամուրը կանգ է առնում:

- Կարո՞ղ ես ուտել:

- Այն էլ՝ ինչպե՛ս:

«Այ քեզ երջանիկ մարդ», - մտածում է հարուստն ու նախանձում քաղցած մուրացկանին:

ԶԲՈՍԱՇՐՋԻԿԸ

Ամերիկացի մի զբոսաշրջիկ այցելեց Եգիպտոսի անապատներից մեկում ճգնող մի մենակյացի: Տեսնելով նրա համեստ խուցը՝ նա շատ զարմացավ: Սենյակում միայն մի սեղան կար եւ դրա վրա դրված Աստվածաշունչ:

- Հայր սուրբ, իսկ որտե՞ղ է քո ամբողջ կահույքը:

- Իսկ քո՞նը որտեղ է,- հարցրեց ճգնավորը:

- Ի՞մը, ախր ես այստեղ հյուր եմ: Ես որոշ ժամանակով եմ եկել:

- Ես նույնպես:

ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ

Ռուսական մի գյուղում ծյունառատ մի օր վանականը մտնում է խաղալիքների խանութ եւ ասում.

- Կրկին ես եմ, մի տիկնիկ տվեք: Այդ երեխան ինձ է սպասում, գնում եմ մանկատուն:

Խոստացել եմ նրան, որ այսօր պիտի տիկնիկ
սվիրեմ:

Խանութի աշխատողը զարմանում է.

- Բայց չէ՞ որ արդեն երրորդ անգամն է, ինչ
տիկնիկ եք տանում այդ աղջնակի համար:

Վանականը պատասխանում է.

- Առաջին անգամ ճանապարհին մի
փայտահատ հանդիպեց եւ խնդրեց իր կա-
ցինը պահել, որպեսզի ինքը ծառի ճյուղերը
բարձի իր սայլակի վրա: Խաղալիքը դրեցի մի
քարի վրա ու օգնեցի այդ մարդուն, իսկ այդ
պահին մի ագռավ ծառից ցած իջավ ու տիկ-
նիկը տարավ: Երկրորդ անգամ ճանապար-
հին մի գառամյալ ձերունի հանդիպեց, ցույց
տվեց Աստվածաշունչը եւ սկսեց Ավետարա-
նից հարցեր տալ: Ես էլ գոհունակությամբ
նրա մոտից վերցրի Սուրբ Գիրքը, խաղալի-
քը դրեցի ձյունածածկ ճերմակ գետնին եւ
պատասխանեցի այդ մարդուն հետաքրքրող
հարցերին: Երբ պտտվեցի տիկնիկի կողմը,
միայն այն տեսա, թե ինչպես է ագռավն այն
իր կտուցով պիկո- պիկո բռնած բարձրանում
դեպի երկինք: Հիմա երրորդ անգամ եմ եկել
եւ խնդրում եմ ինձ օգնեք:

Խանութի աշխատողը մոտենում է լուսա-
մուտին ու ապշահար ասում.

- Նայեք պատուհանից դուրս. այդ ինչքան ազոավներ են հավաքվել մոտակա ծառերի վրա ու կարծես ձեզ են սպասում:

ԸՆԿԵՐ ՈՒՆԵՄ

Միքայել հրեշտակապետը իջնում է երկիր՝ մի մարդու հոգին տանելու: Երբ հայտնվում է այդ մարդուն, վերջինս նրանից խնդրում է մի քիչ էլ ապրելու ժամանակ տալ: Միքայելը հարցնում է.

- Որքա՞ն ժամանակ ես ցանկանում:

- Որքան տերեւ կա այս հսկա խնձորենու վրա,- մի քիչ մտածելուց հետո պատասխանում է մարդը:

Միքայել հրեշտակապետն ասում է, որ շատ է ուզածը:

- Ուրեմն այս ծառի վրա եղած խնձորների չափ:

- Այդ էլ է շատ,- պատասխանում է հրեշտակապետը:

- Հապա որքա՞ն:

- Ամեն մի ընկերոջդ համար մեկ տարով կերկարացնեմ քո կյանքը:

Մարդը մտում է շվարած, քանի որ ընկեր չուներ:

- Այդ դեպքում ինչի՞նչ է պետք կյանքդ,-
ասում է հրեշտակապետը եւ առնում մարդու
հոգին:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ճգնավորի հետ գրուցելիս վաճառականը
պնդում է, թե հարստության շնորհիվ ազատ-
վել է ինչ-որ մեկի ցանկությամբ կամ ճաշա-
կով շարժվելու պարտադրանքից:

- Ահա՛ թե ինչ,- բացականչում է ճգնավորը,-
իսկ այսօր, երբ քարավանիդ համար արոտի
տեղ էիր ընտրում, հաշվի առար տեղանքի
գեղեցկությունը, թե՞ խոտի առատությունը:

- Պարզ բան է՝ խոտի առատությունը որո-
շեց իմ ընտրությունը:

- Ուրեմն պարզվում է, որ չնայած հարուստ
մարդ ես եւ ազատ ես որոշումներիդ մեջ, բայց
շարժվում ես անասունիդ ճաշակով:

ԹԻԹԵՈՆԵՐԻ ԱՌԱԿԸ

Ասում են՝ Չինաստանում երեխան իր հո-
գետր հասունությանը հասնում է այն ժամա-
նակ, երբ սկսում է խորիել մահվան մասին:

Մի պայծառ օր այդպիսի մի երեխա մոտենում է ուսուցչին եւ հարցնում.

- ՈՒսուցի՛չ, պատմիր ինձ, մի փոքր պատմիր մահվան մասին:

Ուսուցիչը երեխային նստեցնում է իր կողքին եւ ասում.

- Մի ճրագ կախված էր առաստաղից: Եվ ամեն գիշեր երեք թիթեռ թռածում էին դրա շուրջը եւ զմայլվում դրա գեղեցկությամբ: Մի օր էլ թիթեռներից մեկը ասաց.

- Այսքան ժամանակ այս ճրագի մոտ եմք, սակայն դրա մասին գրեթե ոչինչ չգիտենք:

Եվ նրանք որոշում են ավելի մոտ գնալ ճրագին եւ նրա մասին ավելի շատ բան իմանալ: Եվ երբ առաջին թրթեռնիկը մոտենում է ճրագին, զգում է նրա տաքությունը եւ, հետ դառնալով, ասում է ընկերներին.

- Ճրագը ջերմացնում է:

Ապա թռչում է երկրորդ թիթեռնիկը եւ, ավելի մոտ գնալով ճրագին, վառում է իր թևի մի մասը ու հետ դառնալով՝ ասում.

- Ճրագն այրում է:

Հերթը հասնում է երրորդին. սա ամենից խիզախն էր: Նա այնքան է մոտենում ճրագին, որ հանկարծ աներեւութանում է, ու միայն մի

փոքրիկ ծուխ է երեւում, որը դանդաղորեն սկսում է վեր բարձրանալ: Թիթեռնիկները տրտմում են եւ սկսում լաց լինել, քանի որ ճրագի մասին ամենաշատն իմացող իրենց ընկերն այլեւս չէր կարող նրանց որեւէ բան պատմել:

ԻՄԱՍՏՈՒՆ ԶՐՈՒՅՑ

Մի ուսուցիչ կանչվում է պալատ՝ թագավորի հետ իմաստուն գրույց վարելու: Նա արքային ու գահասրահը զննելուց հետո սկսում է խոսել տիրակալի թագի գեղեցկության, թանկարժեք քարերի փայլի, ոսկյա զարդերի խորհրդանշական իմաստի մասին: Ուսուցչին ուղեկցող աշակերտները մնում են զարմացած: Պալատից հեռանալուց հետո նրանք հարցնում են, թե ինչու ուսուցիչը թագավորի հետ չխոսեց գիտության մասին:

- Եթե խոսեի այդ թեմայով, թագավորը կամ կծանձրանար, կամ կհուսահատվեր: Խոսելուց առաջ մշտապես իմացեք, թե ի՞նչն է ձեր գրուցակցի թանկագին գանձը, եւ խոսեք դրա բարձր նշանակության մասին: Միայն այդ միջոցով կարող եք գրույցը հրապուրիչ դարձնել

եւ ճանապարհի բացել նրա հետագա շարունակության համար: Իմաստուն չէ այն ուսուցիչը, որ խոսելիս հաշվի չի առնում ունկնդրի գիտակցության մակարդակը:

ԻՄ ՍԽԱԼԸ ԱԶԴՈՒՄ Է ՇԱՏԵՐԻ ՎՐԱ

Նավի ուղեւորներից մեկը վերցնում է կացիկը եւ սկսում հարավածել հատակին: Հարեան խցերից լսում են հարվածների ձայնը ու գալիս նրա մոտ: Երբ հարեանները հարցնում են, թե ինչու է կոտրում հատակը, նա պատասխանում է.

- Իմ խուցը չէ՞, ինչ կուզեմ՝ կանեմ:

Հարեանները՝ թե.

- Բայց չէ՞ որ քո խցի հատակը ծակելով՝ կխորտակես բոլորիս:

Ուղեւորը՝ նորից անտարբեր.

- Ի՞նձ ինչ, ես իմ խուցն եմ կոտրում:

ԻՆՉ ՈՐ ՈՒՆԵՍ ՔՍԱԿՈՒՄ

Քրիստոսի առաքյալներից մեկը անցնում էր մի գյուղով: Անբարեհաճ մարդկանց ամբոխը լուտանք էր թափում նրա գլխին: Առաքյա-

լը կանգնած ժպտում էր: Մի մարդ, որ կողքից դիտում էր այդ ամենը, մոտենում ու հարցնում է նրան, թե ինչու է այդպես վարվում: Նա պատասխանում է.

- Ամեն ոք տալիս է այն, ինչ ունի իր քսակում:

ԻՆՉՊԵՄ ԱՊԱՎԻՆԵԼ ԱՍԾՈՒՆ

Այնպես է ստացվում, որ Աստծուն կուրորեն հավատացող եւ սիրող մի մարդ փոքրիկ նավակով հայտնվում է փոթորկալից ծովի մեջտեղում: Սկսում է աղոթել Աստծուն, որ հասնի փրկության: Անցնում է որոշ ժամանակ. մի նավ է հայտնվում, եւ նավապետը առաջարկում է իր օգնությունը, բայց այս մարդը հրաժարվում է օգնությունից՝ ասելով, թե Աստված իրեն մենակ չի թողնի, կհասնի օգնության: Այսպես երկու նավ էլ են հայտնվում, առաջարկում են իրենց օգնությունը, բայց մարդը կրկին հրաժարվում է օգնությունից՝ պատճառաբանելով, թե Աստված կհասնի իրեն: Երկար մնալով ծովի վրա՝ նավակը ի վերջո խորտակվում է, եւ մարդը խեղդվում է: Դրախտում հանդիպում է Աստծուն եւ դժգոհ հարցնում.

- Տե՛ր Աստված, ես հավատում էի քեզ, ամբողջ կյանքիս ընթացքում աղոթել եմ Քեզ, եւ Դու ասում էիր, թե օգնության ձեռք կմեկնես ինձ, երբ նեղության մեջ լինեմ. ինչո՞ւ թույլ տվեցիր, որ խեղդվեմ:

Աստված պատասխանում է.

- Սխալվում ես, եթե կարծում ես, թե այն երեք նավերը պատահաբար հայտնվեցին քեզ մոտ:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճամփեզրին մի չորացած ծառի բուն էր ցցված: Գիշերվա մթության մեջ ճամփով մի գող անցավ, վախեցավ. ծառի բունը նրան ոստիկան թվաց: Հետո մի սիրահարված տղա անցավ, սիրտը թրթռաց, կարծեց՝ սիրած աղջիկն է կանգնած: Հեքիաթների սյուժեներից սարսափած երեխան ծառը ուրվականի տեղ դրեց ու լաց եղավ: Բայց բոլոր դեպքերում էլ ծառը նույն ծառն էր: Աշխարհը մեզ թվում է այնպիսին, ինչպիսին մենք ինքներս ցանկանում ենք պատկերացնել:

ԼԱՎ Է

Աֆրիկյան թագավորը մի ընկեր ուներ: Նրա ընկերը, ինչ էլ որ պատահեր, միշտ ասում էր՝ լավ է: Թագավորը շատ էր սիրում որսի գնալ եւ իր հետ միշտ տանում էր իր ընկերոջը:

Մի օր՝ առավոտ ծեփին, նրանք որոշեցին կրկին որսի գնալ: Եղանակը հիասքանչ էր: Նրանք ստիպված չեղան երկար փնտրել իրենց որսը, եւ դեռ մեկ ժամ չէր անցել, երբ թագավորը եղևիկ տեսավ: Նա արագորեն հանեց գեները եւ լիցքավորելիս հանկարծ վնասեց մատը: Արքան ճչաց ցավից եւ արագորեն սկսեց փաթաթել մատը: Եղևիկը, լսելով նրա ձայնը, փախավ եւ անհետացավ անտառում: Թագավորի ընկերը շտապեց օգնության եւ սկսեց դարմանել վերքը: Մի պահ լուռ մնալուց հետո նա նայեց թագավորին եւ ասաց՝ լավ է: Թագավորը հետ քաշեց ձեռքը, բարկացած մի ապտակ հասցրեց նրան ու ասաց.

- Ինչպէս ես համարձակվում, անզգամ: Թո թագավորի մատը կտրվեց, եւ դա լա՛վ է:

Երեկոյան նրանք վերադարձան ամրոց. թագավորը հրամայեց բանտարկել իր ընկե-

րոջը: Մի ամիս անց թագավորը նորից որսի գնաց, այս անգամ առանց իր ընկերոջ՝ միայն իր շքախմբով: Երբ նրանք հասան անտառ, հանկարծ չորս կողմից վրա տվեցին վայրենիները եւ սկսեցին կապկպել նրանց: Թագավորին եւ իր հետ եղողներին տարան իրենց վրանների մոտ եւ վառելով կրակը՝ սկսեցին ինչ-որ տարօրինակ երգեր երգել: Ամբողջ շքախմբին նրանք գցեցին եռացող կաթսայի մեջ, իսկ երբ հերթը հասավ թագավորին, բոլորը մի կողմ քաշվեցին: Մի քանի րոպեից թագավորը հասկացավ, որ բոլորն իր կտրված մատին էին նայում: Այս վայրենիները սնահավատություն ունեին եւ չէին ուտում այն մարդկանց, որոնց մատներից որեւէ մեկը վնասված էր: Այսպես թագավորը փրկվեց: Վերադառնալով ամրոց՝ նա գնաց իր ընկերոջ մոտ եւ ընկնելով նրա ոտքերը՝ ասաց.

- Ների՛ր ինձ, քանի որ սխալ գործեցի ու քեզ բանտարկեցի:

Ընկերը հանդարտորեն ժպտաց ու ասաց.

- Լավ է:

Թագավորը զարմացած հարցրեց՝ ինչո՞ւ:

- Եթե դու ինձ չբանտարկեիր, ես այս վերջին որսի ժամանակ քեզ հետ կլիների, եւ ինձ էլ կուտեին:

ԼՈՒԻԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Չորս աշակերտներ միմյանց խոստացան լռություն պահպանել իրենց կամքի ուժը փորձելու համար: Առաջին օրը լռեցին, բայց երբ գիշերը եկավ, ու կերոսինե լապտերները լրիվ աղոտ դարձան, աշակերտներից մեկը չդիմացավ ու ասաց ծառային.

- Այդ լապտերներն ուղղի՛ր:

Երկրորդ աշակերտը զարմացավ, երբ լսեց առաջինի ձայնը:

- Մենք պայմանավորվել էինք ոչ մի բառ չարտասանել,- ասաց նա:

- Է՛յ, տխմարնե՛ր, ինչո՞ւ եք խոսում,- հարցրեց երրորդը:

- Միայն ես եմ լուռ,- եզրակացրեց չորրորդը:

ԽՈՆԱՐՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանքում ապրող միաբաններից մեկը օրերից մի օր հայտարարում է, թե ինքը հայտնություն է ստացել, որ վաղը Քրիստոս երեւալու է դիմացի բլրի վրա: Հաջորդ օրը վանականները արագ-արագ բարձրանում են բլրի գագաթը, որպեսզի տեսնեն Քրիստո-

սին: Երբ նրանք շտապում էին դեպի բլուրը, ճանապարհին հանդիպում են մի ծերունու, որը նույնպես ուզում էր բարձրանալ, բայց չէր կարողանում, քանի որ արդեն հոգնել էր: Բուր վանականները անտարբեր անցնում են ծերունու կողքով և չեն օգնում: Մի երիտասարդ վանական գրկում է այդ ծերունուն և բարձրացնում բլուրը: Ճանապարհին մի ձայն է լսում, որն ասում է.

- Դո՛ւ միայն արժանացար Աստծուն տեսելուն:

ԿԱՂ ՈՉԽԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մի ոչխար կաղում էր և հովվի կողքից երբեք չէր հեռանում: Մի անձանոթ հարցնում է հովվին, թե ինչո՞ւ է այդ ոչխարը կաղում, ինչո՞ւ իր կողքից չի հեռանում: Հովվվը բացատրում է, որ այդ ոչխարը խուլ է ծնվել և հովվի ձայնը չի լսում: Այդ պատճառով էլ միշտ վտանգի մեջ է լինում: Շատ անգամներ նա փրկել է ոչխարին վտանգից: Ի վերջո հովվվը նրա սրունքին վնաս է հասցրել: Դրանից հետո ոչխարը սկսել է կաղալ, սակայն փոխարենը հովվի մոտից հեռու չի գնում և հեռու է մնում փորձություններից:

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Հնդկական քաղաքի արվարձաններից մեկում սրնգահարը մեղմ հնչյունների ելելեջներով մի խորը փոսի մոտ նվագում է: Ծանր ոռքի սիրահար մի քանի երիտասարդներ, զինված երաժշտական գործիքներով, հավաքվում են նրա շուրջը: Նրանցից մեկը հարցնում է.

- Դու գիտե՞ս, թե ինչ է ոռք երաժշտությունը:

Սրնգահարը չի պատասխանում, այլ շարունակում է նվագելու զարմացած հայացքով նայել նրանց:

Երիտասարդն այս անգամ հեզևանքով ասում է.

- Ահա ես մի մարդ, որ հնամենի երաժիշտ է...Մենք հիմա քեզ կներկայացնենք մոդերն, կյանք պարզեւող երգերը, եւ կիմանաս, թե ինչ է ծանր ոռքը, ու կհասկանաս, թե ժամանակից, կյանքից ինչքան հետ ես ընկել:

Ռռքի սիրահարները հպարտորեն սկսում են բարձրածայն նվագել եւ երգել: Այդ պահին փոսի միջից Ֆշշոց է լսվում, եւ երկու հսկա կորբաներ են դուրս գալիս ու առաջանում դեպի այդ երիտասարդները, որոնք սարսափից քարանում, լռում են:

Սրնգահարն ասում է.

- Ինչո՞ւ դադարեցրեցիք ձեր մողեռն երգե-
րը, գուցե այս կոբրաները դրանք գնահատեն,
հանդարտվեն ու ձեզ իսկապես կյանք պար-
գենեն:

Սրնգահարը շարունակում է սվագել, եւ
օձերը հետ են քաշվում:

Կան մարդիկ, որոնք կարծում են, թե աղա-
վաղելով աստվածային ներդաշնակությունը՝
ժամանակակից նորարարություն են հայտ-
նաբերում ու կյանքի հարատեւման իմաստ
ստեղծում:

ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Փիլիսոփա ուսուցիչը, մտնելով լսարան, մի
տարա է դնում սեղանին եւ ասում.

- Սա մեր կյանքն է:

Ապա սկսում է տարան լցնել խճաքարերով:
Երբ տարան ի վերջո լցվում է, նա դառնում է
աշակերտներին ու հարցնում, թե կարո՞ղ է
արդյոք էլի ավելացնել: Պատասխանը հնչում
է՝ ոչ: Ուսուցիչը սկսում է ավազ լցնել, որի հա-
տիկները սողոսկում են խիճերի արանքներով
եւ ի վերջո լրացնում ազատ տարածքը: Ուսու-
ցիչը կրկին հարցն ուղղում է աշակերտներին.

- Կարող ե՞մ էլի լցնել:

Աշակերտները թե՛ ո՛չ:

Ուսուցիչը սկսում է ջուր լցնել: Տուրը, համապատասխան տեղ գրավելով, սպառում է տարայի դատարկությունը: Ուսուցիչը հարցնում է.

- Այս փորձից ի՞նչ հասկացաք:

Աշակերտներից մեկը պատասխանում է.

- Եթե ուզենանք, կյանքում ամեն ինչի համար էլ տեղ կգտնվի:

Ուսուցիչը կրկին հարցնում է.

- Եթե ես սկզբից լցնեի ավազն ու ջուրը, այս քարերին տեղ կմնա՞ր:

Ուրախություններ, հետաքրքրություններ, վեճեր, ֆիլմեր, ծանոթություններ, արկածախնդրություններ... սրանք բոլորն ավազ եւ ջուր են, եթե մեր կյանքը սկզբից սրանցով լցնենք ապա քարերին՝ եկեղեցի, ընտանիք, ընկերներ, մասնագիտություն, տեղ չի մնա:

ՀԱԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի անգամ ծեր ճգնավորի աշակերտները եկան նրա մոտ ու հարցրին.

- Ինչո՞ւ ես վատ հակումները հեշտությամբ տիրում մարդուն, իսկ բարի հակումները, ընդհակառակը, դժվարությամբ, եւ ներքուստ կայուն չեն արմատավորվում:

ՃգնաՎորը ի պատասխան հարցրեց.

- Ի՞նչ կլինի, եթե առողջ սերմը թողնեն արեւի տակ, իսկ հիվանդ սերմը թողնեն հողում:

- Բարի սերմը, որն առանց հողի է թողնւած, կմեռնի: Իսկ վատ սերմը կձլարձակի, կաճի ու չար պտուղներ կտա,- պատասխանեցին աշակերտները:

- Մարդիկ այդպես են վարվում. փոխանակ բարի գործեր կատարեն եւ հոգու խորքում աճեցնեն բարի պտուղները, դրանք ցուցադրում են եւ այդպիսով կործանում են առողջ սերմերը: Իսկ իրենց թերութիւններն ու մեղքերը, որպեսզի ուրիշները չտեսնեն, մարդիկ թաքցնում են հոգու խորքերում: Այստեղ դրանք աճում են եւ կործանում մարդուն հենց իր սրտում:

ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի բարեպաշտ, հյուրընկալ, աստվածավախ մարդ է լինում: Մի օր այս մարդու տան մտով անցնում է մի հեթանոս: Տեսելով հեթանոսին՝ մարդը նրան հրավիրում է իր տուն՝ հաց ուտելու: Ուտելուց առաջ նրանք աղոթքի են կանգնում, բայց հանկարծ տանտերը նկատում է, որ հյուրը չի աղոթում: Այն հարցին, թե ինչու չի աղոթում, նա պատասխանում է.

- Ես Աստծուն չեմ պաշտում, այլ պաշտում եմ արեգակին: Դրա համար էլ չեմ աղոթում:

Տանտերը, գայրանալով հյուրի վրա, դուրս է անում տնից:

Որոշ ժամանակ անց Աստված երագի մեջ հայտնվում է հավատացյալին եւ ասում.

- Ես յոթանասուն տարի համբերեցի, որ այդ հեթանոսը դարձի գա, բայց դու մի քանի րոպե էլ չհամբերեցիր:

ՀԱՅՀՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի վանական անցնում էր գյուղի մոտով: Գյուղի բնակիչները, լինելով չարագործ մարդիկ, շրջապատում են վանականին եւ սկսում են նրան հայհոյել: Վանականը չէր պատասխանում նրանց: Հավաքված բազմությունը զարմացած էր, որ վանականը նույնիսկ չէր էլ գայրացել, միայն լուռ լսում էր: Հանկարծ վանականը ասում է նրանց.

- Կողքի գյուղի բնակիչները ինձ տեսնելուն պես մոտ բերեցին զամբյուղներով լի մրգեր: Սակայն ես նրանցից ոչինչ չվերցրի, ձեր կարծիքով՝ նրանք ի՞նչ արեցին մրգերով լի իրենց զամբյուղները:

Ամբոխի միջից մի ծերունի պատասխանեց.

- Երեւի տարան տուն եւ բաժանեցին իրենց երեխաներին ու ըտանիքի անդամներին:

Վանականը ժպտալով ասաց.

- Իսկ ի՞նչ եք անելու դուք ձեր վիրավորանքներն ու հայիոյանքները: Ես հրաժարվեցի մրգերից, եւ նրանք հետ վերցրին, ահա ես հրաժարվում եմ եւ ձեր հայիոյանքներից ու վիրավորանքներից, այնպես որ դո՛ւք էլ ձեր բեռը տարեք տուն եւ արեք դրանց հետ՝ ինչ ուզում եք:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՐ

Տիրակալը հարցնում է իմաստունին.

- Ինչպե՞ս ճանաչենք դավաճանության բույնը եւ հավատարմության պատվարը:

Իմաստունը ցույց է տալիս հեծյալների խումբը եւ ասում.

- Ահա՛ դավաճանության բույնը:

Հետո ցույց է տալիս միայնակ մի ճամփորդի եւ ասում.

- Ահա՛ հավատարմության պատվարը, քանի որ միայնակին ոչ ոք չի դավաճանի:

Եվ այդ օրվանից տիրակալն իրեն շրջապատում է հավատարմությամբ:

ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ

Թագավորը, իր փոքրաթիվ զինվորներին մի ձորակում մարտական շարքով կանգնեցրած, սպասում է հուժկու արագությամբ իրենց մոտեցող թշնամու հեծյալ զորաջոկատին:

Իր աջ կողմում գտնվող զինակցին ասում է.

- Գովելի է, երբ դու պատրաստակամություն հայտնեցիր ծառայելու ինձ եւ զինակցելու այս ճակատամարտում: Հիշում եմ, երբ ամեն անգամ հաղթական քայլերթով մայրաքաղաք էինք մտնում, հավաստիացնում էիր, որ ամեն պարագայում էլ հավատարմորեն կձառայես ինձ եւ պահանջում էիր նոր հնարավորություններ ու ակնկալիքներ: Այժմ, վերհիշելով քո հավատարմությունը, այս դժվարին պահին վստահում եմ քեզ, որպեսզի ապահովես իմ թիկունքի պաշտպանությունը, իսկ մենք հեռանում ենք:

Զինակիցը տարակուսած պատասխանում է.

- Բայց ինչպե՞ս միայնակ մարտի բռնվեմ մի ամբողջ զորաջոկատի հետ
Թագավորն ասում է.

- Մի՞թե չես վստահում ինձ:

Ապա զինվորների հետ հեռանում է՝ նրան թողնելով այդտեղ:

Այս մարդը նայում է մոտեցող թշնամու լավ զինված զորաջոկատին, որը կարճ ժամանակ անց կարող է նրան շրջապատել: Թագավորի հավաստիացումները նրան կասկածելի են թվում. շրջվում է եւ երկմտելով արագորեն հեռանում այդ վայրից, հասնում է արքային, որը ասում է.

- Նայի՛ր վեր. ծառերի ու բլուրների վրա թշնամու զորաջոկատից կրկնակի իմ նետածիզներն են կանգնած: Հակառակորդի ջոկատը նույնիսկ չէր կարող քեզ մոտենալ, իսկ դու երկմտեցիր ու ինձ չվստահեցիր, այդ դեպքում ինչպե՞ս ես նոր հնարավորությունների սպասում, երբ իրապես ինձ չես հավատում:

Իսկ մենք ավելի շատ հավատարիմ ենք Աստծո՞ւն, թե՞ ավելի շատ պահանջում ենք ու բողոքում...

ՀԱՎԱՏՔՈՎ ԱՐՎԱԾ ԱՂՈԹՔ

Մի մարդ իր այգում աշխատելիս ոտքը վնասում է: Արյունահոսությունը դադարեցնելու համար վերքին խաղողի տերեւ է դնում՝

առանց իսկ մտածելու, որ թուփը դեղակյութով սրսկված է: Տերեւից թույլը ներծծվում է արյան մեջ, եւ սկսվում է արյան վարակ: Հիվանդությունն այնքան է խորանում, որ այդ մարդուն չեն կարողանում բուժել: Իսկ բժիշկները հույսները կտրել էին: Այդ ժամանակ նրա աղջիկը, որը կյանքում չէր տեսել, թե ինչպես են աղոթում, եւ չգիտեր աղոթքի զորության մասին, սկսում է աղոթել Աստծուն եւ խնդրում է, որ առողջացնի հորը: Թեեւ մարդու վիճակն անհուսալի էր, սակայն նույնիսկ բժիշկները զարմանում են, երբ նա առողջանում է: Երբ այդ մարդը տուն է վերադառնում, աղջնակը գրկում է հորը եւ ականջին շշջում.

- Հայրի՛կ, գիտե՞ս, ես ամեն օր աղոթում էի Աստծուն, որ նա քեզ բուժեր, եւ դու առողջացար:

Այդ մարդը, որ անհավատ էր, զայրանում է դստեր վրա եւ ասում.

- Աստված չկա, ինձ ոչ թե նա է բուժել, այլ բժիշկը:

Դրանից մի քանի օր չանցած՝ նրա վիճակը կրկին բարդանում է, եւ չնայած բժիշկների ջանքերին՝ լիովին բուժված հիվանդությունը նորից գլուխ է բարձրացնում: Եվ դա արդեն անդառնալի էր նրա համար:

Այդպես է. հավատքով արված աղոթքը կարող է բուժել եւ կենդանություն տալ մարդուն, իսկ անհավատությունը՝ սպանել:

ՀՅՈՒՐԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մի հյուրասեր մարդ երեք օրով հյուր էր գնացել իր ընկերոջը: Երբ նա պատրաստվում էր հեռանալ, տանտերը նրանից ներողություն խնդրեց այն բանի համար, որ ինքը չկարողացավ նրան ընդունել այնպես, ինչպես որ հարկն էր:

- Շատ լավ, - ասաց հյուրը, - երբ դու գաս ինձ մոտ, ես քեզ ավելի լավ կընդունեմ:

Շուտով առիթը ներկայացավ, եւ նրա ընկերը հյուր եկավ: Ի գարմանս իրեն՝ հյուրը տանը ոչ մի առանձնակի պատրաստություն չկատեց: Տանտերը զգաց հյուրի տարակուսանքը եւ ասաց.

- Ես խոստացել էի, որ ավելի լավ կընդունեմ քեզ, քան դու ընդունեցիր ինձ: Դու ինձ վերաբերվում էիր ինչպես օտարի. մանրակրկիտ նախապատրաստվել էիր իմ այցելությանը, իսկ ես քեզ ընդունեցի ինչպես ընտանիքի անդամի:

ՀՐԱՇՔ

Մի մարդ լսում է, որ մի վանքում չլաված, չտեսնված հրաշքներ են տեղի ունենում վանականների ձեռքով: Այդ մարդը որոշում է անձամբ գնալ վանք եւ համոզվել դրանում: Մեծ դժվարությունների գնով նա հասնում է այդ վանք: Այնտեղ ապրում է մեկ օր, մեկ ամիս, մեկ տարի, սակայն ոչ մի հրաշքի ակախատես չի լինում: Եվ մի օր գնում է վանահոր մոտ եւ ասում.

- Խաբե՛լ եք ինձ, այստեղ ոչ մի հրաշք էլ չի լինում:

Վանահայրը, ժպիտը դեմքին, պատասխանում է.

- Մարդիկ սովոր են հրաշք անվանել այն, երբ Աստված լսում եւ կատարում է մարդու կամքը, սակայն հավատա՝ չկա ավելի մեծ հրաշք, քան այն, երբ մարդ ինքն է լսում եւ կատարում Աստծո կամքը:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԺՈՂՈՎ

Մի առիթով հրեշտակները ժողով են գումարում եւ Գաբրիել հրեշտակապետին են

ներկայացնում վիճակագրությունն այն մասին, որ աշխարհի բնակչության երկու տոկոսն է, որ կատարում է Աստծո կամքը, իսկ մնացած ինևսունուրը կամ անհավատ է, կամ թերահավատ, կամ դուրս է Աստծո կամքից: Գաբրիելը ասում է.

- Եկե՛ք մեր ունեցած երկու տոկոսին խրախուսելու համար նրանց բացիկներ ուղարկենք:

Բացիկներն ուղարկվում են:

- Հարցս հոռետորական չէ: Որեւիցե մեկը գիտի՞, թե այդ բացիկներում ինչ է գրված: Զգիտե՞ք: Ես էլ չգիտեմ, որովհետեւ մենք այդ բացիկները ստացողների մեջ չենք:

ՃԱՆԱԴԱՐՏ ԴԵՊԻ ԴՐԱՆՏ

Մի մարդ մահանում է, եւ հրեշտակը նրան ուղեկցում է հոգեւոր կայաններ: Սկզբից նրանք մտնում են մի սենյակ, որտեղ շրջանաձեւ նստած էին մի խումբ մարդիկ, իսկ սենյակի կենտրոնում դրված էր ջրով լի մի մեծ կաթսա: Նրանցից յուրաքանչյուրը մի երկար գդալ ուներ եւ փորձում էր դրանով ջուր խմել կաթսայից: Սակայն գդալները շատ երկար էին, եւ երբ նրանք ջուր էին վերցնում, չէին

կարողանում պատել եւ հասցնել իրենց բերաններին: Եվ բոլորն էլ այսպես ծարավ էին մնում:

Հրեշտակն ասում է, որ դրանք այն մարդիկ են, ովքեր դժոխք են գնալու: Այնուհետև հրեշտակը մարդուն ուղեկցում է մի նոր սենյակ, որտեղ նույն տեսարանն էր՝ մեկ տարբերությամբ: Այստեղ էլ կային ջրով կաթսան եւ այդ երկար գդալները: Սակայն ի տարբերություն նախորդ սենյակի՝ այստեղ յուրաքանչյուրն իր գդալով դիմացիկին էր ջուր տալիս, եւ բոլորն էլ հագեցնում էին:

- Ահա՛ սրանք էլ ժառանգելու են Աստծո Արքայությունը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը հոգում է ոչ թե միայն իր, այլ իր նմանների մասին:

ԾՇԳՐԻՏ ՊԱՏԱԽՍԱՆԸ

Հին դարերում հայտնի մի ճարտասանական դպրոց կար, որի ուսուցիչները մեծ հռչակ էին վայելում ողջ աշխարհում իրենց իմաստնության եւ ճարտար լեզվի շնորհիվ: Մի օր դպրոցի սաներից մեկը, քայլելով ծովեզերքին, մտածում է, թե արդյոք կա՞ մի բան աշխարհում, որ իր ուսուցիչը չիմանա: Այս-

պէս խորհելով զբոսնում է եւ հանկարծ մի թիթեռն է տեսնում թփի վրա նստած: Բռնում է թիթեռին եւ ասի մեջ փակած՝ գալիս է ուսուցչի մոտ: Թիթեռը խուտուտ է տալիս տղայի ասիք, ուստի նա, ականա ժպտալով, հարցնում է ուսուցչին, թե արդյոք իր ասի միջի թիթեռը կենդանի՞ է, թե՞ սատկած: Ուսուցիչը պատասխանում է.

- Հարցիդ պատասխանը քո ձեռքում է:

ՃՈՃԱՆԱԿԸ

Երիտասարդ վանականը վանահոր հետ անցնում է մի խաղահրապարակի մոտով:

Երիտասարդ վանականն անընդհատ իրեն մեղադրում է եւ ասում.

- Հայր սուրբ, իմ հոգեւոր կյանքում այնքան մեծ ձեռքբերումներ էի ունեցել, երանելի հոգեւոր բարձունքների հասել, սակայն կրկին գայթակղվեցի, մեղքն ինձ ցած նետեց, ու հետ նահանջեցի:

Վանահայրը ոչինչ չի պատասխանում: Մտնելում է մի ճոճանակի, նստում ու մտազբաղ հայացքը դեպի երկինք հառած՝ սկսում է ճոճվել:

Երիտասարդ վանականը զարմացած ժպտում է ու հարցնում.

- Հայր սուրբ, ձեր մանկությունն եք հիշել:
Վանահայրը պատասխանում է.

- Նկատո՞ւմ ես՝ ինչքան հետ եմ ճոճվում,
այդքան էլ դեպի վեր եմ բարձրանում: Մար-
դու կյանքում էլ է այդպես: Եթե իրապես հաս-
կանում է իր սխալը, զղջում ու ապաշխարում,
ապա ինչքան հետ է նահանջել, այդքան էլ դե-
պի առաջ է գնում: Արդ, մի՛ տխրիր, այլ ուրախ
եղիր, որովհետեւ նորից դեպի վեր ես բարձ-
րանում:

ՄԱՀՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է

Հարուստ մի իշխանավոր իր ծառային ու-
ղարկում է շուկա՝ գնումներ կատարելու: Սա
գնում է եւ սարսափած վերադառնում տուն ու
դիմում իր տիրոջը՝ ասելով.

- Տե՛ր իմ, ես այսօր շուկայում Մահին եմ
հանդիպել. նա ինձ շատ վախեցրեց: Խնդրում
եմ, ինձ տուր քո ամենաարագընթաց ձիւն, ես
ուզում եմ փախչել այս քաղաքից:

Տերն իր ամենալավ ձիւն տալիս է ծառային,
եւ սա սրընթաց հեռանում է քաղաքից: Իշ-
խանը որոշում է գնալ շուկա, որպեսզի գտնի
Մահին ու հարցնի այս ամենի մասին: Երբ իշ-
խանավորը շուկայում հանդիպում է Մահին,
հարցնում է.

- Ասա՛ տեսնեմ, դու ինչո՞ւ իմ ծառային վախեցրիր:

Իսկ Մահը, խորամանկ ժպտալով, պատասխանում է.

- Ես չեի ուզում վախեցնել, ես ուղղակի զարմացա, երբ նրան այս քաղաքի շուկայում տեսա. չէ՞ որ այսօր երեկոյան ես նրան ուրիշ քաղաքում պիտի հանդիպեի:

ՄԱՏԻՏԸ

Փոքրիկը նայում է, թե տատիկն ինչպես է կամակ գրում, եւ հարցնում է.

- Դու գրում ես, թե մեզ ի՞նչ էր եղել: Իսկ մի-գուցե իմ մասի՞ն ես գրում:

Տատիկը թողնում է գրելը, ժպտում թռռիկին ու ասում.

- Կռահեցիր, քո մասին եմ գրում: Բայց ավելի կարեւոր է ոչ թե այն, ինչ գրում եմ, այլ այն, թե ինչով եմ գրում: Կցանկանայի, որ դու, երբ մեծանաս, այս մատիտի նման լինես:

Փոքրիկը հետաքրքրությամբ նայում է մատիտին, բայց առանձնահատուկ ոչինչ չի նկատում:

- Սա ճիշտ այնպիսին է, ինչպիսին բոլոր այն մատիտներն են, որ տեսել եմ:

- Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպե՛ս

ես իրերին նայում: Այս մատիտն օժտված է հիևզ հատկություններով, որոնք քեզ անհրաժեշտ են ամբողջ աշխարհի հետ հաշտ ապրելու համար: Առաջինը՝ դու կարող ես հանճար լինել, բայց երբեք չպետք է մոռանաս Ուղղորդող ձեռքի գոյության մասին: Այդ ձեռքն անվանում ենք Աստված եւ պետք է միշտ Նրա կամքին վստահենք: Երկրորդ՝ ժամանակ առ ժամանակ հարկ է լինում մատիտը սրել, որ գրի: Այդ գործողությունը նրա համար մի քիչ ցավոտ է, բայց փոխարենը դրանից հետո ավելի նուրբ է գրում: Հետեւաբար, ցավին կարողացիր դիմանալ՝ հիշելով, որ այն վստմացնում է քեզ: Երրորդ՝ եթե մատիտ ես օգտագործում, միշտ կարող ես ռետիկնով ջնջել այն, ինչ սխալ ես համարում: Հիշի՛ր, որ ինքդ քեզ ուղղելը միշտ էլ օգտակար է: Դա հաճախ ճիշտ ճանապարհին մնալու միակ միջոցն է: Չորրորդ՝ մատիտի մեջ կարելորդ ո՛չ թե փայտն է, ինչից պատրաստված է, եւ ո՛չ էլ ձեւը, այլ նրա ներսի գրաֆիտը: Այդ պատճառով միշտ մտածիր, թե ինչ է կատարվում քո ներսում: Եվ վերջապես հիևզերորդ՝ մատիտը միշտ իրենից հետո հետք է թողնում: Նույն կերպ էլ դու ես քո հետեւից հետք թողնում քո արարքներով եւ այդ պատճառով լա՛վ կշռադատիր յուրաքանչյուր քայլդ:

ՄԱՐԴԸ ՄԱՐԴ Է

Կոնֆուցիոսին հանգիստ չի տալիս Լաո-Ցզիի ուսմունքը, եւ նա գնում է նրան տեսնելու: Կոնֆուցիոսն ավելի տարիքով էր եւ կարծում էր, թե Լաո-Ցզին իրեն կվերաբերվի ընդգծված հարգանքով: Բայց երբ ներս է մտնում, Լաո-Ցզին նույնիսկ տեղից վեր չի կենում ու նստել չի առաջարկում. նրան հատուկ ուշադրության չի արժանացնում:

- Դուք չէ՞ք ընդունում կիրթ վարվեցողության կանոնները,- հարցնում է Կոնֆուցիոսը:

Լաո-Ցզին պատասխանում է.

- Եթե կամենում եք նստել, նստեք: Եթե կամենում եք կանգնել, կանգնեք: Ո՞վ եմ ես, որ ձեզ ասեմ, թե ինչ անեք: Ես ձեր կյանքին չեմ խառնվում: Մարդը մարդ է, նա չի կարող լինել բարձր կամ ցածր: Մենք բոլորս նույն կեցության մասնակիցներն ենք: Մարդկանցից ոչ մեկը մյուսից ոչնչով առավել չէ, եւ ոչ ոք ընդգծված վերաբերմունքի ակնկալիք չպիտի ունենա: Մարդկանց տարբերակումը հիմարություն է, անիմաստ բան:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ

Մի գյուղացի կար, որ մտածում էր, թե շատ ավելի լավ կլիներ, եթե ինքը կարգավորեր եղանակը: «Տորենն ավելի շուտ կհասներ, հասկերն ավելի տռուզ կլինեին», - մտածում էր նա: Աստված լսում է նրա մտքերն ու ասում.

- Քանի որ կարծում ես, թե ինձնից լավ գիտես՝ երբ ինչ եղանակ է պետք, այս տարի դո՛ւ կարգավորիր եղանակը:

Գյուղացին շատ է ուրախանում եւ անմիջապես ցանկանում է, որ արեւոտ եղանակ լինի: Երբ հողը չորանում է, ցանում է հացահատիկն ու ցանկանում, որ անձրեւ տեղա: Տորենն աճում է, փարթամանում: Գյուղացին նայում է արտին ու հրճվում:

Աշնանը, երբ արտը դեղնում է, նա գնում է ցորենը ինձելու, եւ որքան մեծ է լինում նրա հիասթափությունը, երբ պարզվում է, որ հասկերը դատարկ են: Գյուղացին նորից է սկսում զանգատվել Աստծուն:

- Բայց եղանակը դո՛ւ ես պատվիրել,- պատասխանում է Արարիչը:

- Ամեն ինչ արել եմ՝ ինչպես հարկն է,-

արդարանում է գյուղացին,- հերթով ապահովել եմ եւ՛ անձրեւ, եւ՛ ջերմութիւն:

- Իսկ քամու մասին մոռացել ես, եւ հասկերը դատարկ են մնացել: Քամին անհրաժեշտ է նրա համար, որ ծաղկափոշին մի հասկից մյուսին տանի, փոշոտում կատարի, եւ հասկը պտղավորվի: Առանց քամու բերք չի լինի:

Գյուղացին գլխիկոր լսում է եւ ասում.

- Ավելի լավ է՝ դու կարգավորես եղանակը, Տե՛ր Աստված: Մենք մեր «իմաստնությամբ» բնության մեջ միայն խառնաշփոթ ենք ստեղծում:

ՄԵԾ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մի իմաստունի հարցնում են, թե ինչով էր զբաղվում մինչեւ հոգեւոր կատարելության հասնելը: Նա պատասխանում է.

- Ուսուցչիս համար փայտ էի կտտրում եւ ջրհորից ջուր էի կրում:

- Իսկ հիմա՞ ինչ ես անում:

- Ուսուցչիս համար փայտ եմ կտտրում եւ ջրհորից ջուր եմ կրում:

Հարցնողը մնում է զարմացած, թե այդ դեպքում ո՞րն է տարբերությունը:

- Տարբերությունը մեծ է: Առաջ ես դա

անում էի որպես պարտականություն՝ ինձ ստիպելով, ջանքեր գործադրելով: Անում էի, քանի որ ուսուցիչս էր հանձնարարում, բայց հոգուս խորքում բարկանում էի, չնայած ոչինչ չէի ասում: Իսկ հիմա դա ինձ համար պարտականություն չէ, այդ գործն իմ սերն է: Ես սիրում եմ ծերունի ուսուցչիս: Տարեցտարի նա ավելի է ծերանում եւ ավելի շատ է ջերմության ու հոգատարության կարիք գգում: Նրան սիրելով եմ ես փայտ կոտրում ու ջուր կրում: Չկա առաջվա տհաճությունը եւ ներքին դիմադրությունը:

ՄԵԾԱՀԱՐՈՒՄՏԵ

Մի մեծահարուստ պաշտոնյա ամեն երեկո մտնում է եկեղեցի, աղոթում, ապա մռայլված եւ անհանգիստ սրտով հեռանում: Մի օր եկեղեցու մոտ մի չքավոր մարդու հարցնում է.

- Ինչպե՞ս է, որ դու ամեն անգամ աղոթքդ վերջացնելուց հետո մեծ ուրախությամբ ու խաղաղությամբ ես գնում: Կարո՞ղ ես այդ գաղտնիքն ինձ էլ ասել:

Չքավոր մարդը հարցնում է.

- Իսկ ի՞նչ ես Աստծուց խնդրում:

Մեծահարուստը պատասխանում է.

- Մի բարի գործ եմ ուզում ձեռնարկել: Տեսնում եմ՝ ունենոր մարդիկ բարձրահարկ շենքեր են կառուցում, ինքս էլ փորձում եմ այդպիսի գործ կատարել, որ մեր երկրին մեծ պարծանք բերեմ: Սակայն միջոցները բավարար չեն, իսկ Աստված ինձ չի օգնում, որ իրականացնեմ այն:

Չքավոր մարդն ասում է.

- Գաղտնիքն այն է, որ երբ ես աղոթում եմ, Աստծուն գոհություն եմ հայտնում իմ ունեցածի համար եւ չեմ հիշում, թե ինչ չունեմ, ու չեմ դժգոհում չունեցածիս համար:

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Մի գյուղացի նկատեց, որ իր դրամապանակը փողերով հանդերձ անհետացել է: Խուզարկելով ամբողջ տունը՝ նա դրամապանակը չգտավ ու եզրակացրեց, որ այն գողացել են: Ստովի վերհիշելով բոլոր նրանց, ովքեր վերջերս այցելել էին իրեն, գյուղացին եզրակացրեց, որ գողը հարեւանի տղան է: Տղան նրա մոտ էր եկել հենց դրամապանակի անհետանալու նախօրեին, եւ ուրիշ ոչ ոք չեր կարող գողությունը կատարել: Հաջորդ անգամ տղային հանդիպելով՝ գյուղացին նրա վար-

քում բազմաթիվ նշաններ նկատեց, որոնք հաստատում էին իր կասկածները: Տղան բացահայտորեն ամաչում էր նրանից, թաքցնում իր աչքերը եւ, ընդհանրապես, գող կատվի տեսք ուներ: Մի խոսքով՝ նրա ամեն մի հայացքը եւ շարժումը մատնում էին, որ գողը նա է: Բայց գյուղացին ոչ մի ապացույց չուներ ու չգիտեր՝ ինչ անել: Ամեն անգամ հանդիպելիս տղան ավելի ու ավելի մեղավոր տեսք էր ունենում, իսկ գյուղացին գնալով չարանում էր: Վերջապես նա այնպես զայրացավ, որ որոշեց գնալ տղայի հոր մոտ ու նրան ծեւական մեղադրանք ներկայացնել: Այդ պահին իր կիսը ձայն տվեց.

-Տես, թե ինչ եմ գտել մահճակալի հետեւում,- ասաց նա ու ամուսնուն մեկնեց փողերով դրամապանակը:

Հաջորդ օրը գյուղացին նորից գնեց իր հարեւանի տղային. ո՛չ շարժումներով, ո՛չ հայացքով նա գողի նման չէր:

ՄԵՂՔԻ ԾԱՌԸ

Աշակերտը գնում է ուսուցչի մոտ եւ հարցնում.

- Ուսուցի՛չ, դու փայլում ես քո իմաստնութ-

յամբ, մարդիկ աշխարհի տարբեր ծայրերից գալիս են քո խրատները լսելու: Արդ, աղաչում եմ, ասա՛ ինձ՝ ինչպե՞ս թողնեմ մեղքերս:

Ուսուցիչը լռում է եւ ոչինչ չի պատասխանում: Երեկոյան, իրենց սովորության համաձայն, ուսուցիչն ու աշակերտը գնում են անտառ՝ ճեմելու: Ուսուցիչը, տեսնելով մի հաստաբուն կաղնի, վազում եւ փաթաթվում է ծառին ու սկսում աղաղակել.

- Օգնեցե՛ք, օգնեցե՛ք:

Աշակերտն ասում է.

- Ուսուցիչ, բայց չէ՞ որ դու ինքդ գրկեցիր այդ կաղնին եւ երբ կամենաս, բաց կթողնես այն:

Ուսուցիչը բաց է թողնում կաղնու կնճռոտ բունն ու ասում.

- Իրավացի ես, զավա՛կս: Ահա տե՛ս, ես իմ կամքով բռնեցի կաղնին եւ իմ կամքով էլ արձակեցի, այդպես եւ դու քո կամքով ես մեղանչում եւ քո կամքով էլ կարող ես ազատագրվել մեղքից:

ՄԵՂՔԻ ՉԱՓԸ

Մի երիտասարդ գնում է իր պապի մոտ եւ ասում, որ մեղքերն իրեն բռնել են եւ բաց

չեն թողնում: Նա հարցնում է պապին, թե ինչ անի: Պապը, լինելով իմաստուն մարդ, թոռանը տանում է այգի: Այնտեղ նրանք մի թուփ են տեսնում, եւ պապն ասում է, որ տղան պուկի այն: Տղան իրեն հանձնարարված գործը կատարում է մեծ հաճույքով: Մի քիչ գնալուց հետո նրանք հասնում են մի հաստաբուն ընկուզենու: Պապն ասում է, որ տղան փորձի արմատահան անել ծառը: Այս անգամ տղան չի կարողանում: Եվ այդ ժամանակ պապն ասում է.

- Թուփը, որ հեշտությամբ պոկեցիր, քո մեղքն է, եւ դեռ այն քավել կարող ես, իսկ այս ծառը իմ մեղքը, որ արդեն շատ դժվար է արմատախիլ անել: Արդ, քանի դեռ մեղքը վերջնականապես չի հաստատվել քո մեջ, անհապաղ պոկիր այն ու դեն գցիր: Իսկ այդ կարող ես անել աղոթքի միջոցով:

ՄԻ ԻՄԱՍՏՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հին Հունաստանում ապրող մի իմաստուն ոսպ էր ուտում ծառի տակ: Նրան է մոտենում մեծահարուստ եւ հպարտ մի պալատական հռետոր ու ծաղրանքով խրատում.

- Ո՛րվ իմաստուն մարդ, եթե դու քո խելա-

ցիության հետ մի քիչ շողոքորթություն ու հպարտություն ունենայիր եւ կարողանայիր կեղծավորություն անել, ապա այժմ պալատում կլինեիր ու փառահեղ ճաշ կուտեիր:

Իմաստունը անվրդով պատասխանում է.

- Իսկ դու, ո՛վ ստախոս, եթե ոսպով բավարարվեիր, կարիք չէիր ունենա կեղծավորություն անելու եւ ստորանալու մեծամեծների առջեւ:

ՄԻ՛ ՀԱՅՀՈՅԻՐ

Մի մարդ շատ էր սիրում աղոթել ու աղոթում էր շատ ջերմեռանդ ու ինքնամոռաց: Սակայն այդ մարդը ուներ մի թերություն. նա շատ էր հայիոյում: Նա իր խոսքերը միշտ համեմում էր «հատընտիր» հայիոյանքներով: Մի անգամ, երբ նա դաշտից տուն էր գնում, քաղցը սկսում է տանջել նրան: Եվ երբ արդեն ուժասպառ ընկնում է գետնին, սկսում է աղոթել Աստծուն եւ խնդրել, որ սովամահ չլինի: Այդ պահին նրա մոտ է գալիս մի հրեշտակ, որը ձեռքին ուներ գարշելի մի ափսե, որի մեջ կային ազնվական կերակուրներ: Մարդը տեսնում է այդ եւ ասում, որ ինքը չի կարող ճաշակել այդ ափսեից, քանի որ այն գարշելի է: Եվ հրեշտակը նրան պատասխանում է.

- Քո աղոթքները նման են այս կերակուր-
ներին, իսկ հայիոյանքները՝ այս ափսեին:
Արդ, փառաբանությունդ, որ մատուցում ես
Աստծուն, բարի է ու գեղեցիկ, բայց սիրտդ՝
անմաքուր, որի համար էլ այն չի սիրվում եւ չի
ընդունվում:

ՄԻ՛ ՔՆՆԱԴԱՏԻՐ

Մի տանուտեր հավատարիմ ու պիտանի
ծառա ուներ, որին կարգել էր իր ողջ ունեց-
վածքի վերակացու: Մի օր նրանք գրուցում
էին Աստծո պատվիրանի եւ Ադամի անհնա-
զանդության մասին: Ծառան, Ադամի անհաս-
տատ մտքի վրա զայրանալով, ասաց.

- Տե՛ր, Ադամը շատ սխալ է արել, օրինակ
եթե դու ինձ սաստիկ հրաման տայիր, ես եր-
բեք զանց չէի առնի:

Տերը լռեց: Օրեր հետո, երբ ծառան զգոն
չէր եւ Ադամի վերաբերյալ ասածները չէր հի-
շում, տերը նրան փոքր սափոր տվեց եւ ասաց,
որ այն անվնաս պահի եւ չբացի՝ իմանալու
համար, թե ինչ է մեջը, հակառակ դեպքում
խոստացավ ծառային զրկել այդ ամսվա վար-
ձից եւ աշխատանքից:

Եվ այս մասին ծառային անընդհատ հի-
շեցնում էր:

Իսկ ծառան, գնալով իր սենյակ, միառժամանակ սկսեց տարուբերվել զանազան մտքերի ու փորձությունների հողմով՝ կամենալով իմանալ, թե ինչ կա սափորի մեջ: Նա մտածեց, որ եթե ինքը բացի սափորը այդ սենյակում, որտեղ մարդ չկար, ապա տերը չի իմանա այդ մասին: Ի վերջո նա սափորը բացեց, եւ թռչունը, որ դրա մեջ էր, թռավ: Այդ ժամանակ նա հույժ տրտմեց, որովհետեւ մտահղացումը հասկացավ: Երբ տերը հարցրեց նրան սափորի մասին, ընկնելով նրա ոտքերը՝ սկսեց թողություն հայցել, ինչին, սակայն, չարժանացավ: Տերը նրան ասաց.

- Ո՛վ ծառա, չար եւ ինքնահավան, դու, որ մեր նախահորն անհնազանդության համար դատում էիր՝ քո մտքի հաստատակամությունը գովելով իմ առաջ, քեզ դատապարտեցիր: Արդ, հեռու մնա ինձնից, որպեսզի իմ երեսն այլեւս չտեսնես:

ՄԻԱՅՆԱԿ՝ ԱՅՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Մեկն ասում է.

- Ինչքան տխուր ու գորշ է այս կյանքը: Ոչինչ չի ստացվում, ոչ լույս եմ տեսնում, ոչ կյանքի գեղեցկությունն ու բնությունը: Ոչ ոք ըստ արժանվույն չի գնահատում ինձ: Այս-

քան ժամանակ լռության մեջ եմ, հեռու մեղավոր աշխարհից ու ամեն ինչից, բայց Աստծո ձայնն էլ չեմ լսում: Հանկարծ արձագանքող մի ձայն է լսվում.

- Խխո՛նջ եղբայր, պատյանիցդ դո՛ւրս եկ: Թաքնվել ես քո պատյանում եւ դժգոհում ես, թե ոչ լույս ես տեսնում, ոչ էլ բնություն ու կյանք:

Խխունջն ավելի է քաշվում դեպի իր պատյանի խորքը, որպեսզի այդ ձայնը չսի, նայում է չորս կողմն ու ասում.

- Ինչքա՛ն տխուր է այս կյանքը. մի՞թե ամբողջ աշխարհում միայն ինքս կամ:

Երբ մարդ պարփակվում է իր եսի մեջ, այն դարձնում կյանքի կենտրոնն ու աշխարհը, երբ մարդ ավելորդ համեստությամբ, ամաչկոտությամբ փակվում է իր հոգու խորքում, մշտապես նայում իր եսին եւ սպասում՝ լսելու Աստծո ձայնը, ինչպե՞ս կարող է ունկնդրել Արարչի խոսքը, երբ իրականում ինքն իրենով է հմայված:

ՄՈՒՐՃ ԵՎ ՄԵԽԵՐ

Մի փայտագործ, ցասումով լեցուն, մուրճի ուժեղ հարվածներով մի գերանի վրա մեծ մեխեր է ամրացնում եւ այդ կերպ մարդկութե-

յանն ու մի անձնավորության մեղադրում ինչ-որ արարքի համար:

Մի Մարդ դանդաղորեն մոտենում է եւ ասում.

- Ձգում ես, չէ՞, թե մեխերն ինչպես են փայտը ճեղքում ու մխրճվում նրա մեջ: Երբ սրասույր մեխերն այդպես իմ ձեռքերի ու ոտքերի մեջ էին մխրճվում, ես ձեզ չէի մեղադրում, այլ ինչքան խորն էին թափանցում, այդքան ներում էի անհիշաչար կերպով: Արդ, մի՛ չարախոսիր եւ մեղադրիր մարդկանց եւ մեղք մի՛ գործիր, որովհետեւ մուրճի եւ մեխերի գիևը վաղուց արդեն վճարել եմ ձեզ համար, որպեսզի կյանք ունենաք, քանի որ ներումն ու Աստծո սերն անսահման են:

ՆԱՄԱԿԸ

Մի դատավոր դուրս է գալիս եկեղեցուց ու տեսնում, որ մի հրեշտակ՝ նամակներով լի տոպրակով, նույնպես դուրս է գալիս եկեղեցուց: Եվ մարդը հարցնում է.

- Աստծո՛ հրեշտակ, այդ ի՞նչ նամակներ ես տանում:

Հրեշտակը պատասխանում է.

- Մարդկանց խնդրանքներն եմ տանում

Աստծու մոտ, որպեսզի հաջորդ օրը պատասխան նամակները բաժանեն նրանց: Եթե ցանկանում ես, դու էլ կարող ես մի նամակ գրել, եւ վաղն իսկույն եւեթ կփոխանցեն պատասխան նամակը:

Դատավորն ասում է.

- Ինչքան գալիս եմ եկեղեցի, աղոթում, խնդրում, Աստված լռում է, չի պատասխանում: Վերջապես եկավ այդ օրը, երբ իրապես պատասխան կստանամ:

Այնուհետեւ մի թուղթ ու գրիչ է վերցնում ու ոգեւորված գրում, նամակը հրեշտակին հանձնում:

Հաջորդ օրը հրեշտակը գալիս է եւ Աստծուց ուղարկված ծրարը փոխանցում է այս մարդուն, որը մեծ սպասելիքներով ու ուրախությամբ բացում է այն: Սակայն ներսում մի դատարկ, մաքուր թուղթ է գտնում ու դժգոհությամբ ասում.

- Այստեղ որեւէ պատասխան չկա: Միայն ճերմակ, մաքուր թուղթ է: Աստված կրկին ինձ չպատասխանեց:

Հրեշտակը հարցնում է.

- Իսկ ի՞նչ էիր գրել Աստծուն:

Դատավորը պատասխանում է.

- Գրել էի, որ իմ հարեանը երկու ծի ունի,

իսկ ես՝ մեկը, եւ նա նաեւ մի ավանակ ունի, իսկ ես չունեմ: Խնդրել էի, որ Աստված ինձ մի արաբական նժույգ տա: Եվ հետո, երբ երեկ եկեղեցի էի գալիս, տեսա, որ մի մարդ մի շատ գեղեցիկ ոսկյա մատանի ունի, այն էլ՝ ադամանդակուռ, իսկ իմ մատանին շատ հասարակ է: Խնդրեցի, որ ինձ էլ տրվի այդպիսի հնարավորություն, եւ ես էլ ունենամ այդ մատանուց. ո՛չ ավելին, ավելին ինձ պետք չէ: Բայց ամենակարեւորը, որ իմ գործը շատ քիչ է. քիչ մարդկանց եմ դատում, քան իմ դատավոր ընկերները:

Հրեշտակը թույլ չի տալիս շարունակել եւ ասում է.

- Աստված քեզ միշտ էլ պատասխանել է, պարզապես դու չես կամեցել լսել, քանի որ տենչացել ես լսել քեզ համար ցանկալի պատասխան: Այս ճերմակ, մաքուր թուղթը, որ ուղարկվել է քեզ, պատասխան է, որով ցույց է տրվում, որ Աստված կամենում է, որ դու էլ այս թղթի նման մաքուր ու շիտակ լինես:

ՆԵՐԵՆՈՒ ՄԱՍԻՆ

Մի մարդ ճգնավորին հարցնում է.

- Եթե ինչ-որ մեկն ինձ հարվածի, ես ի՞նչ պետք է անեմ:

ՃգնաՎորը պատասխանում է.

- Եթե ծառից չոր ճյուղ ընկնի եւ հարվածի քեզ, դու ի՞նչ պետք է անես:

Սարդն ասաց.

- Ոչինչ չեմ անի, դա պարզապես պատահականություն է, սոսկ համընկում, որ ես հայտնվեցի ծառի տակ այն պահին, երբ նրանից ճյուղ էր ընկնում:

ՃգնաՎորն ասաց.

- Դե ուրեմն ևույն բանն արա. ինչ-որ մեկը խելագարված էր, զայրացած էր եւ հարվածեց քեզ: Դա ևույնն է, թե ծառից ճյուղ ընկավ քեզ վրա. թող դա քեզ չհուզի:

ՆԵՐՈՂԱՄԻՏ ԸՆԿԵՐԸ

Մի անգամ անապատում երկու ընկեր կռվեցին, եւ մեկը մյուսին ապտակ հասցրեց: Տուժածը, ցավ զգալով, բայց ոչինչ չասելով, ավազի վրա գրեց. «Այսօր իմ ամենալավ ընկերն ինձ ապտակեց»: Շարունակեցին ճանապարհը, գտան օազիս եւ որոշեցին լողանալ: Նա, ով ապտակ էր ստացել, փրկվեց խեղդվելուց. ընկերը փրկեց: Երբ ուշքի եկավ, գրեց քարի վրա. «Այսօր իմ ամենալավ ընկերը փրկեց իմ կյանքը»: Նա, ով ապտակ էր հասցրել եւ փրկել էր ընկերոջ կյանքը, հարցրեց.

- Երբ քեզ ապտակեցի, դու ավազի վրա գրեցիր, իսկ հիմա՝ քարի վրա: Ինչո՞ւ: Ընկերը պատասխանեց.

- Երբ մեզ նեղացնում են, մենք պետք է ավազի վրա գրենք, որպեսզի քամիները կարողանան ջնջել: Իսկ երբ մեզ լավություն են անում, պետք է քարի վրա գրենք, որպեսզի ոչ մի քամի չկարողանա ջնջել:

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԳԻՇԵՐԸ

Նոր տարվա գիշերը ավելի ուրախ եւ զվարթ անցկացնելու համար մարդիկ որոշեցին հավաքվել եկեղեցում եւ Աստծուն աղոթել, որպեսզի իրենց երազանքը կատարի, եւ այդ գիշեր ծյուն տեղա: Նրանք հավաքվեցին եւ սկսեցին աղոթել, սակայն ծյուն չտեղաց, եւ նրանք տխրեցին: Նրանցից շատերը հուսահատված մտածում էին, թե իրենց գործած անօրենություններով այնքան են հեռացել Աստծուց, որ իրենց աղոթքն Աստծուն լսելի չէ, իսկ մնացյալ մասն էլ սկսեց կասկածել Աստծո գոյությանը: Նրանք տրտմեցին, բացի մի փոքրիկից, որը չափազանց ուրախ շրջում էր եւ կատակներ անում: Շատերը ցանկացան իմանալ մանական ուրախության պատճառը

եւ հարցրին, թե ինչո՞ւ է ևս այդքան ուրախ: Մանուկը նրանց պատասխանեց.

- Ես ձմեռային կոշիկներ չունեմ եւ աղոթեցի Աստծուն, որպեսզի ձյուն չտեղա, եւ ահա, ինչպես տեսնում եք, իմ աղոթքը հասավ Աստծուն:

ՆՊԱՏԱԿԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նետածգության մի վարպետ ծառից կախում է մի թիրախ ու աշակերտներից յուրաքանչյուրին հարցնում, թե ինչ է տեսնում: Մեկը պատասխանում է.

- Տեսնում եմ ծառը ու նրանից կախված թիրախը:

Մեկ ուրիշն ասում է.

- Ես տեսնում եմ ծառի բունը, տերեւները, արեւը, երկնքի թռչունները...

Մյուսները պատասխանում են մոտավորապես նույն կերպ: Աշակերտներից մեկն ասում է.

- Բացի թիրախից՝ ուրիշ բան չեմ տեսնում: Վարպետը մյուսներին ասում է.

- Միայն այսպիսի մարդը կարող է հասնել իր նպատակին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սրբիչը գլխին փաթաթած մի գործարար եւ բարեպաշտ մարդ ասում է.

- Աստվա՛ծ իմ, ինչքան աղոթում եմ, դեղ եմ խմում, գլխացավս չի անցնում: Արդեն չգիտեմ, թե ինչ անեմ:

Նկատում է, որ իրեն ծանոթ մի երգիչ մի սայլ է քարշ տալիս, իսկ սայլը ծանրաբեռնված է մեծ ու փոքր ապրանքներով, իրերով: Եվ սայլի վրա ինչ-որ արարածներ են թռչկոտում, ու նրանցից մեկն էլ, իբրեւ սայլապան, մտրակով հարվածում է երգչին ու դժգոհում.

- Արա՛գ, արա՛գ շարժվիր, մի ծիու չափ էլ չկաս, քանի՞ անգամ քեզ ասեմ, որ ուղղութիւն վերցնես դեպի բարձունքը:

Գործարարը մոտենում է երգչին ու հարցնում, թե ինչ է կատարվում:

Բեռի ծանրության տակ կքած ու լարված երգիչը դժվարությամբ պատասխանում է.

- Պնում եմ դեպի իրականացում, կյանքի իմաստավորում: Սայլի մեջ լցրել եմ իմ նպատակներն ու ծրագրերը, խնդիրներն ու մտահոգությունները: Իսկ այս արարածներն իմ խորհրդատուներն են, որ ինձ հանգիստ չեն տալիս: Իսկ դու ինչո՞ւ ես գլխիդ սրբիչ փաթաթել :

Գործարարը հանում է սրբիչը եւ պատասխանում.

- Ես էլ քեզ պես մի սայլ էի քարշ տալիս, բայց հենց հիմա հասկացա, որ այլեւս գլխացավ չունեմ, քանի որ ծրագրերի ու նպատակների ղեկավարը Աստված է, իսկ ինքս՝ աշխատող: Մեզ մնում է գործել եւ աշխատել, իսկ իրականացումը թողնել Աստծուն: Մի կողմ թող այդ սայլը եւ խաղաղվիր ու ճանապարհիդ առանց այդ սայլի շարունակիր:

ՊԼՏԻԺԸ՝ ՆԱԽՕՐՈՔ

Մի խստապահանջ հայր, երբ իր երկու զավակներն անկարգություն էին անում, պատժում էր նրանց եւ բազմաթիվ անցքեր ունեցող դույլերով պարտադրում ջրհորից ջուր հանել եւ այդ դույլելով բավականին հեռու գտնվող իրենց փոքրիկ բանջարանոցը ջրել: Նրա երկու տղաներն այնքան էին գնում - գալիս, որ միայն մինչեւ երեկո կարողանում էին իրագործել խստապահանջ հոր կարգադրությունը:

Մի օր նրա որդիներից մեկը գաղտագողի մտնում է հարեւանի պարտեզը, կարմրահաս խնձոր քաղում ու դուրս գալիս: Հոր աչքից չի վրիպում այս արարքը, եւ նա պա-

հանջում է ծակծկված դույլով բանջարանոցի համար ջուր կրել: Նա նաեւ իր կրտսեր որդուն է ենթարկում նույն պատժին: Այս տղան տրտնջում է եւ ասում.

- Հայր իմ, չէ՞ որ ես արդեն նախորդ արարքների համար քավել եմ իմ մեղքերը եւ արդար եմ, ինչո՞ւ ես ինձ էլ պատժում, չէ՞ որ ես մեղք չեմ գործել, այլ իմ եղբայրն է մտել հարեանի պարտեզը:

Հայրը պատասխանում է.

- Քեզ էլ նախօրոք եմ պատժում՝ իբրեւ հատուցում այդ արարքի, որովհետեւ գիտեմ, երբ եղբայրդ սկսի ջուր կրել, իսկ ես էլ այստեղ չլինեմ, դու էլ պիտի մտնես հարեանի պարտեզը եւ ակնահաճո ինձորներ քաղես: Ավելի լավ է՝ եղբորդ օգնիր, որպեսզի ժամանակ չունենաս այդպիսի քայլ կատարելու:

Աստված արդար է, եւ արդարությունը հատուցում է պահանջում: Երբեմն Արարիչը մարդուն կարող է խրատել տվյալ պահին իր չկատարած արարքի համար, քանի որ տեսնում է մարդու ապագան եւ այդ կերպով մարդուն Ահեղ Դատաստանի ժամանակ հատուցումից փրկում է: Ահա թե ինչու ամբողջ մարդկությունը պատժվեց Ադամի եւ Եվայի հետ միասին, որովհետեւ ամեն մարդ իր կյանքի որեւէ

դրվագում դառնում է մի Ադամ կամ Եվա՝ քաղելով արգելված պտուղը: «Ում Աստված սիրում է, նաեւ հանդիմանում է ու խրատում է»: /Հայտն. 3.19/

ՊԱՏՃԱՌԻ ԻՄԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ձինվորը կրակել էր սովորում: Նրա դիպուկ կրակոցից հետո ուսուցիչը հարցնում է.

- Գիտե՞ս՝ ինչու դիպար նշանակետին:
- Չգիտեմ:
- Ուրեմն դեռ վարպետության չես հասել:

Ձինվորը գնում է եւ երեք տարի եւս մարզվում: Ուսուցիչը նորից է հարցնում.

- Գիտե՞ս արդյոք, թե ինչու կրակոցը դիպուկ ստացվեց:
- Գիտեմ,- պատասխանում է զինվորը:
- Հիմա արդեն հասել ես վարպետության, քանի որ իմաստուն մարդը գիտի ոչ միայն կյանքն ու մահը, այլեւ դրանց պատճառները:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երիտասարդներից մեկը, բարկությունից այլայլված, մոտենում է մի ծերունու եւ ասում,

որ մի մարդ խիստ վիրավորել է իրեն, եւ ինքը պիտի պահանջի, որ նա բոլորի ներկայությամբ ներողություն խնդրի իրենից, թե չէ «ամեն ինչ վատ կվերջանա նրա համար»:

- Սիրելի՛ս,- պատասխանում է ծերունին,- լսի՛ր իմ խորհուրդը, որով կարող ես լավագույն ձեւով լուծել վրեժդ: Հայիոյանքը հագուստի վրա նետված ցեխ է, ավելի հեշտ է քեզ համար խոզանակել ու ջնջել այն, երբ չոր վիճակում է: Մի՛ շտապիր, սպասի՛ր մի քիչ, որպեսզի երկուսդ էլ հանդարտվեք, ու պիտի տեսնես, որ ամեն ինչ պիտի վերջանա ավելի հանգիստ ձեւով եւ փոխադարձ հասկացությամբ, իսկ եթե համառես ու ինձ չլսես, ձեր ատելությունը ավելի կխորանա, ու երկուսիդ համար ծանր հետեւանքներ կունենա:

Բարեբախտաբար երիտասարդը լսում է ծերունու խոսքը: Հաջորդ օրն իսկ նրան վիրավորողը զղջում է իր թույլ տված սխալի համար եւ ներողություն խնդրում տղայից:

ՋՈՒԹԱԿԱՀԱՐԸ

Սկսնակ ջութակահարը անընդմեջ մի ստեղծագործություն է կատարում: Ինքաբավ ու հեզկորեն ինքն իրեն ասում է.

- Տեսնենք, թե վաղը այդ ո՞վ է լինելու, ով մրցելու է ինձ հետ: Տե՛ր Աստված, իմ հույսը Դու ես, եւ ես վստահ եմ, որ ոչ ոք ինձանից լավ չի կարողանալու կատարել որեւէ երաժշտական ստեղծագործություն:

Այնուհետեւ սկսում է կրկին միեւնոյն երաժշտությունը ջութակով նվագել: Նկատում է՝ Աստծո հրեշտակը քիչ հեռու կանգնած է: Ջութակահարը գոհունակությամբ ասում է.

- Եթե ես իմ երգով կարողացա երկնքից հրեշտակ ցած իջեցնել, ապա ես այլեւս մտածելու բան չունեմ:

Եվ ոգեւորված ու ինքնամոռաց սկսում է նվագել, որպեսզի հրեշտակն ունկնդրի ու հիանա:

Հաջորդ օրը՝ նախքան բեմ դուրս գալը, մի անվանի ու աշխարհահռչակ ջութակահար է տեսնում եւ իր հիացմունքն ու ակնաձանքը արտահայտում.

- Ի՞նչ անակնկալ, միշտ երագել եմ ձեզ տեսնել եւ ձեր ստեղծագործությունները լսել: Իսկ դուք այստեղ ի՞նչ եք անում:

Ականավոր ջութակահարը պատասխանում է.

- Հրավիրել են՝ ինչ-որ ջութակահարի հետ մրցելու համար:

Սկսնակ ջութակահարը շփոթմունքի է մատնվում եւ մի կերպ թուրք կուլ տալիս: Քիչ հեռու կրկին տեսնում է հրեշտակին, ով ասում է.

- Երեկ եկա քեզ զգուշացնելու, որ խոհեմ ու իմաստուն լինես, որ երբ այս մրցույթին մասնակցես, առավել եւս այս հռչակավոր ջութակահարի ստեղծագործությունը չկատարես, սակայն դու ինձ լսել չկամեցար, այլ քո երգն էիր նվագում ու նվագում:

ՋՈՒՐ

Գանձ որոնող մի մարդ, որ մի մեծ աղամանդ էր գտել, դեգերում է անապատում եւ բարձրաձայն ասում.

- Վերջապես իրականացավ իմ երազանքը. գտա այս թանկարժեք քարը, սակայն, Աստված իմ, ջուր եմ ուզում, խմելու ջուր:

Մի արաբ է մոտենում ու սառնորակ ջրով լի մի մեծ թաս է պարզում այդ մարդուն եւ ասում.

- Քարավանով այս կողմերով անցնում էիք: Հեռվից լսեցի ձայնդ: Ահա վերցրո՛ւ, խմի՛ր:

Գանձախույզը ագահորեն ջրի մի մասը խմում է, իսկ մյուս մասը թափում է արեւի

ճառագայթներից շիկացած ավազի վրա եւ
ասում.

- Աստծուց ջուր էի ինդրել, բայց ոչ այսքան
շատ: Ես երագում եմ, որ Նա ինձ ավելի շատ
ոսկի, ադամանդ տա:

Արաբը, շվարած այդ տեսարանից, վերց-
նում է իր դատարկ թասը եւ հեռանում:

Որոշ ժամանակ անց գանձ որոնող մարդը
զգում է, որ նորից սաստիկ ծարավ է, եւ աղեր-
սում է.

- Աստված իմ, մեծ սխալ գործեցի. արա-
բի բերած ջուրը թափեցի ու քո օգնությունը
իմ նյութական ցանկությունների պատճառով
չգնահատեցի: Խնդրում եմ, այս անգամ էլ
օգնիր:

Նեովում նկատում է մի քարավան: Ուրա-
խությամբ շտապում է դեպի այդ կողմ, տես-
նում զինված մարդկանց եւ իրեն ջուր բերող
արաբին ու ասում.

- Եղբայր, ինդրում եմ, կրկին ջուր տուր
իմելու համար, այլապես այս անապատում
ծարավից կմեռնեմ:

Արաբը պատասխանում է.

- Այս կողմերում ջուրն ավելի թանկ է, քան
ամեն մի թանկարժեք քար կամ ոսկի: Այս ան-
գամ վճարի՛ր ջրի համար:

Գանձախույզը ստիպված գրպանից հանում է իր գտած ադամանդը եւ փոխանակում մեկ բաժակ ջրի հետ:

Հաճախ Աստված նաեւ լռում է եւ չի իրագործում մարդկանց խնդրանքները, քանի որ այն, ինչ Աստված հարկ է համարում պարգեւել, մարդիկ հոգեւոր առումով դեռեւս պատրաստ չեն գնահատելու ու կորցնում են:

ՍԱ՛ ԷԼ ԿԱՆՅՆԻ

Մի հզոր թագավոր, որ իրեն շրջապատել էր բազմաթիվ իմաստուններով, կանչում է նրանց ու ասում.

- Ուզում եմ մի այնպիսի մատանի ունենալ, որը հոգուս ինչ-որ առանձնահատուկ խաղաղություն բերի եւ այնպիսի զորություն ունենա, որ դժբախտության ժամին ուրախացնի ինձ, իսկ ուրախության ժամին թախիժով պարուրի:

Որոշ ժամանակ խորհելուց հետո իմաստունները գտնում են ելքը եւ թագավորին են հրամցնում մի մատանի, որի վրա գրված էր. «Սա է՛լ կանցնի»:

ՄԻՐՏ ՈՒՆԵՍ

Ոմն անապատական դուրս է գալիս իր մենաստանից եւ սկսում հանդիպող մարդկանց ավետիս տալ.

- Դու սիրտ ունես:

Երբ նրան հարցնում են, թե ինչու չի հիշեցնում գթության, համբերատարության, նվիրվածության, սիրո եւ կյանքի հիմքը կազմող մյուս բաների մասին, նա պատասխանում է.

- Միայն թե չմոռանան սրտի մասին, մնացածը կախված է դրանից:

ՍՈՒՏԸ

Քարոզն ավարտելուց հետո քահանան ասաց.

- Հաջորդ կիրակի ես ձեզ հետ կխոսեմ ստի մասին: Որպեսզի ձեզ համար ավելի հեշտ լինի հասկալ, թե խոսքն ինչի մասին է լինելու, տանը կկարդաք Մարկոսի ավետարանի 17-րդ գլուխը:

Հաջորդ կիրակի իր քարոզը սկսելուց առաջ քահանան ասաց.

- Խնդրում եմ բոլոր նրանք, ովքեր կարդացել են տասնյոթերորդ գլուխը, ձեռք բարձրացնեն:

Գրեթե բոլոր ներկաները ձեռք բարձրացրին:

- Այ հենց ձեզ հետ էլ ես ցանկանում էի խոսել ստի մասին,- ասաց քահանան:

Մարկոսի ավետարանը տասնյոթերորդ գլուխ չունի:

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՂԵԿՑՈՐԴԸ

Մի անգամ վաճառականները որոշեցին գնալ անդրծովյան երկրներ: Անձանոթ երկրում ճամփորդելու համար ուղեկցորդ վարձեցին ու ճանապարհ ընկան: Հասան մի մեծ անապատի: Այնտեղ մի տաճար կար, ուր զոհ էին մատուցում աստվածների: Ըստ ընդունված կարգի՝ ճամփորդները միայն մարդկային զոհ մատուցելուց հետո կարող էին շարունակել ճանապարհը:

Վաճառականներն սկսեցին խորհրդակցել.

- Մենք բոլորս ազգականներ ենք, միայն ուղեկցորդն է մեզ օտար, միայն նրան կարող ենք զոհաբերել: Եվ այդպես էլ արեցին. ուղեկցորդին զոհաբերեցին ու ճանապարհ ընկան: Բայց շուտով մոլորվեցին անտառում, ու բոլորն էլ կործանվեցին:

ՎԵՐԱՐԿՈՒՆ

Հյուսիսային բելեռից հարավային աշխարհամաս եկած մի ձկնորս, վերարկուն հագին, կանգնում է արեւի հրաշեկ ճառագայթների ներքո Եւ ասում.

- Երկնավոր Հայր, արդեն շատ շոգ է, տանջվում եմ տոթից ու տապից, վերարկուն չեմ կարող հանել, խնդրում եմ, օգնիր:

Մի նավաստի է անցնելիս լինում, որ լսում է նրա խոսքերը Եւ խորհուրդ տալիս.

- Ի՞նչ տարօրինակ մարդ ես. հանի՛ր վերարկուդ, չէ՞ որ ամառ է, Եւ այլեւս շոգից չես տանջվի:

Իսկ հյուսիսաբնակ ձկնորսը, այդ լսելով, ամրացնում է վերարկուի գոտին ու փոքր- ինչ զայրացած պատասխանում է.

- Մի՛ խանգարիր ինձ, քանի որ սպասում եմ, որ Աստված ինձ օգնի, որպեսզի ազատվեմ այս տոթից ու տապից: Իսկ իմ վերարկուն ես շատ-շատ եմ սիրում Եւ այն երբեք չեմ հանի: Եթե մնամ առանց դրա, միգուցե Եւ մրսեմ:

Շատ անգամ մենք նման ենք վերարկուն հագին այս մարդուն, երբ չենք ուզում հրաժարվել մեզ մտատանջող անօգուտ ցանկութ-

յուններից, մտածմունքներից, ինչպես նաև մեղքից, սակայն սպասում ենք, որ Աստված ազատագրի մեզ այդ ամենից, ինչից ամենեին չենք էլ ուզում բաժանվել: Երբեմն էլ այնքան ենք այդ ամենով տարված, որ վախենում ենք դրանք կորցնել:

ՎԵՐՋ, ԹՆ՝ ՍԿԻԶԲ

Մի հուսահատ մարդ կամրջի վրա հետ ու առաջ քայլելով խոսում է.

- Ամեն ինչ կորցրի՝ թե՛ տուն, թե՛ ունեցվածք, թե՛ ընտանիք: Ինչպե՞ս ապրել. ո՛չ աշխատանք ունեմ, ո՛չ էլ փող: Վերջ, ինձ ցած եմ նետում այս կամրջից, ո՞ւմ եմ ես պետք, ապրելու իմաստ չկա այս կյանքում:

Նկատում է, որ մի կարճահասակ արարած նույնպես մտահոգված այս ու այն կողմ է քայլում: Մարդը հարցնում է.

- Իսկ դո՞ւ ով ես, դո՞ւ էլ ես եկել քեզ ցած նետելու այստեղից, թե՞ լսեցիր՝ ինչ էի ասում, եւ իմ կյանքի համար ես մտահոգված:

Արարածը պատասխանում է.

- Մեկ է, չես հավատա, եթե իմանաս, թե ով եմ: Ճիշտ կռահեցիր. քո անձով եմ մտահոգված: Շուտափույթ եկել եմ քեզ խորհուրդներ

տալու: Ասում ես, թե ո՞ւմ ես պետք. հոգիդ է մեզ պետք, հոգիդ: Այս երկու-երեք ժամ է, ինչ մի մեծ կաթսա եմ հայթայթել, դրա տակ բորբ կրակ վառել, կաթսան սեւաթույր ու լավագույն ձյութով լցրել, եռացրել, իսկ դու դեռ մտածում ես՝ մեռնե՞լ, թե ապրել: Մի փոքր էլ որ այդպես շարունակես, գուցե եւ փոշմանես:

Մարդը սարսռած հետ-հետ է քայլում ու ասում.

- Իսկ ես գիտեի, թե ամեն ինչ կվերջանա, բայց տեսնում եմ, որ ամեն ինչ սկսվում է այդ վերջով: Նախքան այստեղ գալը մի գիրք էի կարդում, ուր ասվում էր՝ նայիր շուրջդ եւ կտեսնես, թե ինչքան շատ իմաստ կա ապրելու: Միայն այն, որ գեղեցիկ ու սրբագեղ ծաղիկները քո խնամքի կարիքն ունեն, արդեն իսկ նշանակում է՝ քո կյանքն այս աշխարհում իմաստ ունի: Ավելի լավ է՝ ես գևամ դաշտերում աճող ծաղիկները խնամեմ, քան քեզ լսեմ ու կամրջից ցած նետվելով՝ ուղիղ քո եռացող կաթսայի մեջ հայտնվեմ...:

Դեւն առաջանալով ասում է.

- Ո՞վ մարդ, չէ՞ որ ո՛չ Աստծուն ես հավատում, ո՛չ էլ սատանային, չէ՞ որ բոլոր պատմածներս հեքիաթներ են, դու միայն քեզ ցած նետիր, ես էլ մեծ սիրով կօզնեմ, չէ՞ որ ես

չկամ, գոյություն չունեմ: Թո՛ւյլ տուր՝ ես քեզ միայն այստեղից ցած նետեմ, ու ամեն ինչ կվերջանա, ու կտեսնես վերջը, որտեղից էլ սկսվում է քո վերջը...

Մարդը, արագորեն այդ վայրից հեռանալով, պատասխանում է.

- Դու կաս թե չկաս՝ չգիտեմ, բայց մեկ բան հասկացա եւ գիտեմ, որ ուր կա կամք, այնտեղ միշտ կա ճանապարհ եւ կյանք, ու ամեն մարդ պիտի ծագի ապրել եւ հարատևել:

ՎԵՐՑՐՈՒ՝ ԽԱՉԴ, Ե՛Վ ԻՄ ՀԵՏԵՎԻՑ

Մի մարդ, իր խաչը վերցրած, գնում է Քրիստոսի հետեւից: Ճանապարհին հոգնում է եւ սկսում է տրտնջալ խաչի մեծությունից: Նա խնդրում է Աստծուն, որ իր խաչը փոքրացնի, որպեսզի կարողնա այն ավելի հեշտությամբ տանել: Նա շատ է աղաչում, եւ Աստված ընդառաջում է նրան. թույլ է տալիս, որ խաչը փոքրացնի: Մարդը կտրում է խաչի նեքելի հատվածից եւ շարունակում ճանապարհը: Ահա շուտով հասնում է մի անդունդի եւ նկատում, որ մյուս մարդիկ, իրենց խաչերը դնելով այդ անդունդի բացվածքի վրա, անցնում են նրանով: Նա նույնպես փորձում է դնել իր

խաչը, սակայն մեծ ցավով նկատում է, որ այն ճիշտ իր կտորածի չափով կարճ է բացվածքից, եւ ինքը անդունդն անցնել չի կարող:

ՈՒԶՈՒՄ ԵՍ ԹԱՆԿԱՐԺԵՔ ԶԱՐԴԵՐ ԳՆԱՀԱՏԵԼ՝ ՈՍԿԵՐԻՉ ԴԱՐՉԻՐ

Մի երիտասարդ տղա գնում է եգիպտացի իմաստունի մոտ եւ ասում, թե իմաստունների ասածները ճիշտ չեն եւ նման այլ բաներ:

Իմաստունը, առանց մի խոսք անգամ ասելու, մատից հանում է մատանին եւ մեկնում տղային՝ հետեւյալ խոսքերով.

- Այս մատանին տար շուկա եւ տե՛ս՝ դրա համար քեզ քանի՞ ոսկի կտան շուկայի վաճառողները:

Ամբողջ շուկայում ոչ ոք մատանին մի արծաթ դրամից ավելի չի գնահատում:

- Իսկ հիմա,- ասում է մեծ մտածողը,- մատանին տար ոսկերչի մոտ եւ տե՛ս, թե նա որքան կվճարի:

Ոսկերիչը մատանու համար առաջարկում է հազար ոսկե դրամ: Երիտասարդը ապշում է:

- Իմաստության մասին քո գիտելիքներն այնքան են, որքան վաճառողների գիտե-

լիքները թանկարժեք իրերի մասին,- ասում է իմաստունը, - եթե ուզում ես թանկարժեք զարդեր գնահատել, ոսկերիչ դարձիր:

ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պատմում են, թե մի հեռավոր երկրում ապրում էր տարօրինակ ու հաճախ անհեթեթ ցանկություններ ունեցող մի թագավոր: Մի գիշեր նա քնելուց առաջ մենախոսում է.

- Չկա մի բան, որ կյանքումս տեսած չլինեմ: Տեսա ու վայելեցի այն ամենը, ինչ կարող էր աննշմար մալ հասարակ մարդկանց համար: Միայն մի բան կա, որ չեմ արել. ուզում եմ Աստծուն տեսնել:

Հաջորդ առավոտ նա հրավիրում է իր բոլոր ենթականերին, կրոնավորներին ու գիտնականներին եւ նրանց ասում, որ ուզում է Աստծուն տեսնել: Ու երեք օր ժամանակ է տալիս, որպեսզի իր ցանկությունը իրականացնեն, իսկ չկատարելու դեպքում բոլորը դատապարտվելու են մահվան:

Տարօրինակ ցանկություն. ո՞վ պիտի կարողանար իրականություն դարձնել նման արտառոց ու անիրականանալի ցանկությունը: Երեք օրը անցում է, եւ ոչ մեկը չի կարողանում ելքը գտնել: Թագավորը զայրացած

պատրաստվում է հրաման արձակել՝ պատժելու մարդկանց, բայց այդ ժամանակ ծառան հայտնում է նրան, թե մի հասարակ հովիվ ասում է, որ կարող է կատարել արքայի ցանկությունը:

Հովիվը թագավորին հրավիրում է դաշտ: Օրը շատ արեւոտ էր: Հովիվը թագավորին խնդրում է վերել՝ երկնքին նայել, սակայն երբ թագավորը փորձում է հայացքը հառել երկնքին, աչքերը ուժեղ արեւից ցավում են, ու նա չի կարողանում բացել կոպերը: Չայրացած թագավորը հովիվին մեղադրում է, թե իրեն կուրացնել է ուզում:

- Քան՛վ լիցի,- հանդարտորեն պատասխանում է հովիվը,- բայց իմացեք, որ Աստծու բյուրավոր փառքերից արելը փոքրագույնն է միայն: Դուք, որ անգամ նրան չկարողացաք նայել, ինչպե՞ս պիտի նայեք Աստծուն, որ հազար անգամ ավելի շողշողուն է. այս աչքերը անզոր են՝ Նրան տեսնելու, պետք է ունենալ ուրիշ աչքեր:

ՓԱՅՏԵ ԿԵՐԱԿՐԱՄԱՆ

Մի մարդ շատ էր ծերացել. աչքերը կուրացել էին, լավ չէր լսում, ծնկները ծալվում էին, ուսելիս ձեռքերը դողում էին, եւ հաճախ

ապուրը թափվում էր սփռոցին: Որդին ու հարսը զզվանքով էին նայում նրան եւ կարճ ժամանակ անց սկսում են ծերունուն տան մի առանձին անկյունում կերակուր տալ՝ հին ափսեով: Իր անկյունից ծերունին տխրությամբ էր նայում սեղանին ու նրա շուրջ նստած զավակներին: Մի անգամ էլ ձեռքերն այնպես դողդողացին, որ ափսեն ձեռքից ընկավ ու կտորվեց: Տառել տանտիրուհին բարկացավ, սկսեց հայհոյել ծերունուն, բայց նա ոչինչ չասաց, միայն խորը հոգոց քաշեց: Որդին հոր համար փայտե աման գետց, եւ ծերունին սկսեց ճաշ ուտել այդ ամանից:

Մի անգամ, երբ ամուսինները նստած էին ճաշի, սեւյակ մտավ նրանց չորս տարեկան որդին՝ ձեռքին փայտի մի կտոր:

- Ի՞նչ ես անելու այդ փայտը, - հարցրեց հայրը:

- Կերակրաման եմ սարքելու,- պատասխանեց տղան,- երբ մեծանամ, հայրիկիս ու մայրիկիս դրանով ճաշ կտամ:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ՀԱՐՅԸ

Մի անգամ Անտոնիոս Մեծը, փորձելով հասկանալ տիեզերքի արարչագործության էությունը, հարց է հղում առ Աստված.

- Տե՛ր իմ, ինչո՞ւ ոմանք կարճ են ապրում, իսկ ոմանք՝ երկար, ինչո՞ւ ոմանք հարուստ են, ոմանք՝ աղքատ...

- Աստուհիո՛ւս, քո՛ գործերը քննիր,- լինում է երկնքի պատասխանը:

ՔԱՀԱՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Միջին դարերում մի ծխական քահանա, որի հոտում աղքատները շատանում են, ու նրանց զավակները դժվարությամբ են ապրում, դիմում է մի մեծահարուստի եւ օգնություն խնդրում նրանից: Հարուստը ոչ միայն զլանում է իր քսակը բացել, այլև կոպտորեն մերժում է քահանայի խնդրանքը ու անպատվում աղքատներին: Աստծո ծառան, անտեսելով նրա կոպտություններն ու վիրավորանքը, ամեն անգամ համառորեն աղքատների սիրույն խնդրում է, որ հարուստը օգնի նրանց:

Եվ երբ մի անգամ քահանան կրկին դիմում է նրան, մեծահարուստը, այլևս չհամբերելով, փեռից դուրս է գալիս եւ չկարողանալով բարկությունը զսպել՝ ուժգնորեն ապտակում է նրան: Քահանան որպես պատասխան ասում է .

- Շնորհակալ եմ, ես իմ բաժինը ստացա, հիմա խնդրում եմ, մի բան էլ իմ աղքատներին տուր:

Կարծես մի լույս է ծագում մեծահարուստի մտքում, եւ նա տալիս է քահանայի խնդրած գումարի կրկնակին ու հազար ներողություն խնդրում իր կոպիտ արարքի համար:

ՔՈՒՆԱԶԸ

Մի մարդու թվում էր, թե իր կյանքի խաչը շատ ծանր է՝ ամենուրեք տառապանքներ, անհարթություններ ու դժվարություններ: Եվ նա մի անգամ գնաց Աստծու մոտ, պատմեց իր դժբախտությունների մասին ու խնդրեց նրան.

- Կարելի՞ է՝ ես ինձ համար ուրիշ խաչ ընտրեմ:

Աստված ժպտալով նայեց մարդուն, նրան կանչեց պահեստարան, որտեղ խաչերն էին, եւ ասաց.

- Ընտրի՛ր:

Մարդը մտավ պահեստարան, նայեց խաչերին ու զարմացավ. ինչ տեսակ խաչեր ասես՝ չկային այնտեղ՝ եւ՛ մեծ, եւ՛ փոքր, եւ՛ միջակ, եւ՛ ծանր, եւ՛ թեթեւ: Մարդը երկար շրջեց

պահեստարանում՝ որոնելով ամենափոքր ու ամենաթեթև խաչը: Ի վերջո նա գտավ փոքրիկ-փոքրիկ, թեթև-թեթև մի խաչ, մոտեցավ Աստծուն եւ ասաց.

- Տե՛ր Աստված, կարելի՞ է՝ սա վերցնեմ:

- Կարելի է,- պատացիսանեց Աստված: -

Դա հենց քո ունեցածն էր է:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Տեղի էր ունենում ֆուտբոլային հանդիպում: Մարզադաշտում ներկա էր մի հետաքրքիր մարդ: Երբ թիմերից մեկը հասավ հաջողության, նա շատ ուրախացավ: Անցավ որոշ ժամանակ, եւ հակառակորդ թիմն էլ գոլ խփեց, եւ նա նորից ուրախացավ: Հանդիսականները զարմացած նայում էին, թե ինչպես է նա ուրախանում երկու թիմերի հաջողության համար: Խաղի ավարտից անմիջապես հետո զարմացած հանդիսատեսները հարցրին նրան, թե ինչո՞ւ է երկու թիմերի հաջողության համար ուրախանում: Եվ նա պատասխանեց.

- Այս երկու թիմերում էլ խաղում են իմ որդիները, եւ ես, ինչպես յուրաքանչյուր սիրող հայր, ուրախանում եմ զավակներիս հաջողությունների համար:

Արդ, ինչպես այս երկրավոր հայրն է ուրախանում իր որդիների հաջողությունների համար, այնպես էլ մեր երկնավոր Հայրն է ուրախանում մեր հաջողությունների համար:

Բովանդակություն

Ազահության մասին.....	9
Ալմաստորոնողը.....	9
Աղոթքի անուղղակի իրականացում.....	11
Աղոթիր հավատով.....	13
Աղոթք ենջեցյալների համար.....	14
Աղքատ որդին.....	15
Աղքատության մասին.....	16
«Ամենակարող» աթեիստը.....	17
Անգոր աղվեսը.....	18
Անհավատ մարդը.....	19
Անհավատ տղան.....	20
Անհավատը.....	21
Անհեթեթ նախատում.....	22
Անմեղ սպանություն.....	24
Անօգուտ ընկերասիրություն.....	25
Ասպետը.....	25
Աստծո գործերն անքննելի են.....	27
Աստուն փնտրելու ճանապարհ.....	28
Աստված մեզ հետ է.....	29
Արժեքավոր արձանիկը.....	30
Բարիք գործիր ամեն դեպքում.....	31
Գեղեցկության մասին.....	32

Գիտելիքի ուժը.....	33
Գյուղացին.....	34
Գոհանալովածով.....	36
Դիմացից եկող պատասխան.....	36
Դրախտ եւ դժոխք.....	37
Դրախտի հարուստը.....	39
Դեւերի ժողովը.....	40
Եղբայրության մասին.....	41
Եկեղեցուն արժանի.....	42
Ես թողեցի աղջկան.....	43
Երեխան.....	44
Երեք ասույթ.....	44
Երկնքի տունը.....	46
Երջանիկ մարդը.....	46
Զբոսաշրջիկը.....	48
Զգոնություն.....	48
Ընկեր ունե՞ս.....	50
Ընտրություն.....	51
Թիթեռների առակը.....	51
Իմաստուն զրույց.....	53
Իմ սխալը.....	54
Ինչ որ ունես քո քսակում.....	54
Ինչպես ապավինել Աստծուն.....	55
Իրականություն.....	56
Լավ է.....	57
Լռության մասին.....	59
Խոնարհության մասին.....	59
Կաղ ոչխարի պատմությունը.....	60
Կյանքի երգը.....	61

Կյանքի իմաստը.....	62
Հակումների մասին.....	63
Համբերության մասին.....	64
Հայհոյության մասին.....	65
Հավատարմության պատվար.....	66
Հավատարմություն.....	67
Հավատքով արված աղոթք.....	68
Հյուրասիրության մասին.....	70
Հրաշք.....	71
Հրեշտակների ժողով.....	71
Ճանապարհ դեպի դրախտ.....	72
Ճշգրիտ պատասխանը.....	73
Ճոճանակը.....	74
Մահն անխուսափելի է.....	75
Մատիտը.....	76
Մարդը մարդ է.....	78
Մարդկային իմաստնություն.....	79
Մեծ տարբերություն.....	80
Մեծահարուստը.....	81
Մեղադրանքի մասին.....	82
Մեղքի ծառը.....	83
Մեղքի չափը.....	84
Մի իմաստունի պատմություն.....	85
Մի՛ հայհոյիր.....	86
Մի՛ քննադատիր.....	87
Միայնակ այս աշխարհում.....	88
Մուրճ եւ մեխեր.....	89
Նամակը.....	90
Ներելու մասին.....	92

Ներողամիտ ընկերը.....	93
Նոր տարվա գիշերը.....	94
Նպատակին հասնելու մասին.....	95
Պատասխանատվությունը.....	96
Պատիժ նախորդը.....	97
Պատճառի իմացություն.....	99
Պատմություն համբերության մասին.....	99
Ջութակահարը.....	100
Ջուր.....	102
Սա՛ էլ կանցնի.....	104
Սիրտ ունես.....	105
Սուտը.....	105
Վաճառականները եւ ուղեկցորդը.....	106
Վերարկուն.....	107
Վե՛րջ, թե՛ սկիզբ.....	108
Վերցրո՛ւ խաչը, եկ՛ իմ հետեւից.....	110
Ուզում ես թանկագին զարդե՛ր գնահատել.....	111
Ուսուցանող պատմություն.....	112
Փայտե կերակրաման.....	113
Փիլիսոփայի հարցը.....	114
Քահանայի պատմությունը.....	115
Քո խաչը.....	116
Ֆուտբոլային հանդիպում.....	117

**ԳԵՂԵՅԻԿ ԱՊՐԵԼՈՒ
ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ**
(խորհմասար պատումներ)

Կազմողներ՝

Նարեկ դպիր Աբրահամյան
Գեորգ դպիր Ավետիսյան
Սարգիս դպիր Ավետիսյան
Վլադիմիր դպիր Գեորգյան
Տիգրան դպիր Երոյան
Վաղինակ դպիր Իորդանյան
Նորիկ դպիր Խաչատրյան
Նարեկ դպիր Ծատուրյան
Ռոման դպիր Մարության
Մանավազ դպիր Սկրտչյան
Վահե դպիր Սկրտչյան
Ռուբեն դպիր Սարգսյան
Արման դպիր Սաֆարյան
Հարություն դպիր Տեր-Ասատրյան

Խմբագիր՝

Վիկտոր Կատվայան

Էջադրումը եւ շապիկը՝

Տ. Մարկոս քհն. Մանգասարյանի